ՍԿԶԲՈՒՆՔ

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՈՒՂՂԱՓԱՌ ՀԱՒԱՏՈՑ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ՍԿԶԲՆԱԿԱՆ ԵՒ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՍՏՈՐԻՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԿԱԶՄԵՑ

ՊԵՏՐՈՍ-ՔԱՀԱՆԱՅ ՅԷՐ-ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆՑ

ՇՈՒՇԻ

Տպարան Հայոց Հոգևոր Տեսչութեան

1899

6

ՍԿԶԲՈՒՆՔ

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՈՒՂՂԱՓԱՌ ՀԱՒԱՏՈՑ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ՍԿԶԲՆԱԿԱՆ ԵՒ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՍՏՈՐԻՆ ԴԱՍԱ-ՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ



ԿԱԶՄԵՑ

ՊԵՏՐՈՍ-ՔԱՀԱՆԱՅ ՏԷՐ-ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆՑ



ՇՈՒՇԻ

Տպարան Հայոց Հոգևոր Տեսչութեան։

1899

Дозволено цензурою. 18 мая 1898 года, г. Тифлисъ.

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

Հրամանաւ Սրբազնագոյն Քահանայապետի ազգիս՝ Տեառն Տեառն Մկրտչի Վեհափառ և Ծայրագոյն Պատրիարք Կաթուղիկոսի, ընթերցեալ գաշխատութիւնս ընդ վերնագրով ,, Սկզբունք Քրիստոնէական ուղղափառ հաւատոյ Հայաստանեայց Առաքելական Սուրբ եկեղեցւոյս,, ոչ գտի 'ի սմա զբանս և զդարձուածս հակառակ իմաստից Աստուածաշունչ սրբազան մատենից և բարեպաշտական տեսութեանց կամ աւանդից առաքելաշաւիղ տօնելի հարց։ 'Ի ստուգութիւն որոյ իմովս իսկական ստորագրութեամբ և դրոշմամբ անուանական կնքոյս հաւաստաբանեմ։ 'Ի 16 ապրելի 1898 ամի 'Ի սուրբ Էջմիածին։

Սուքիաս Արքեպիսկոպոս Պարզեանց։

Ըստ Բարձու հրամանի Վեհափառ Հայրապետի ազգիս, Դիւանս համաձայն վերոգրեալ յայտարարութեան թոյլատրէ տպագրութիւն սորին, որ և վաւերացուցանէ ստորագրութեամբ և դրոշմամբ կնքոյ Հայրապետական Դիւանի։ 'Ի 16 ապրելի 1898 ամի 'Ի Սուրբ Էջմիածին։

'Ի տեղի Դիւանապետի՝ Կորիւն Վարդապետ։

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Պաշտօնական գործով մի քանի տարիներ շարունակ շրջակայելով Արցախու թեմի գիւղերը, այցելելով և Պետութեան իրաւասութեան տակ գտնուող դպրոցները, լսելու Հայաստանեայց ուղղափառ եկեղեցւոյ քրիստոնէական կրօնի դասաւանդութիւնը, ամեն տեղ էլ պատահել եմ դասաւանդութեան նոյն դանդաղ ընթացքին և դասագրքերի անյարմարութեանը, որոնք կազմուած են աշակերտների հասակին, տարիքին և հասկացողութեանը անհամապատասխան կերպով։ Այդ իսկ պատճառաւ մեր մէջ միտք զարթեց այդ դպրոցների համար կրօնի այնպիսի դասագրքեր կազմել, որոնք համապատասխան լինէին ուսանող մանուկների թէ՛ տարիքին և թէ՛ հասկացողութեանը։ Եւ ահա սկզբնական և միջնակարգ դպրոցների ստորին դասարանների երեք և հինգ տարուայ դասընթացի կրօն դասախօսելու համար, պատրաստ են մեր կազմած դասագրքերը, որոնց նիւթերը դասաւորած են աշակերտների տարիքի և հասկացողութեան համեմատական աստիճանների չափով։ Այս գործը գլուխ բերելու համար մենք աչքի առաջ ենք ունեցել բազմաթիւ կրօնի դասագրքեր, որոնցից շատ յօդուածներ նոյնութիւնով կամ համառօտած զետեղել ենք մեր կազմած այս դասագրքերում։

Թերևս մեր կազմած այս դասագրքերն էլ թերութիւններ ունենան, որոնց ցոյց կըտայ գործնական փորձերը, այնու ամենայնիւ սորանց տուած օգուտն անհամեմատ աւելի կըլինի, քան նախկիններինը և որ առաւելն է կրօնուսոյց արժանապատիւ հայրերը այս դասագրքերով դասախօսելով՝ չեն հանդիպիլ ոչ մի դժուարութեան։

Կրօնուսոյց ուսուցիչները չըպիտի բաւականանան աշակերտներին աղօթքները և պատմութիւնները լոկ բերան անել տալով, այլ դորանից զատ, նորանք պիտի առանձնապէս ուշադրութիւն դարձնեն աւանդելի աղօթքը կամ պատմութիւնը մերձեցնել աշակերտների հասկացողութեանը և զարգացնել նորանց կրօնական բարոյական զգացմունքները, պարտաւոր են դժուար և անըմբռնելի բառերը և դարձուածները բացատրել և հասկացնել աշակերտներին, ապա հարց ու փորձի ենթարկելով հաւաստիանալ, թէ նորանք ճշդութեամբ են ըմբռնել աղօթքի կամ պատմութեան նիւթը, թէ ոչ։ Կրօնուսոյցների այս գործը հեշտացնելու համար, մենք դասաւորել ենք իւրաքանչիւր աղօթքի և պատմութեան տակ իւր հարցերը և բացատրել դժուար և անըմբռնելի բառերը։

Կրօնուսոյց ուսուցիչները պիտի ուշադրութիւն դարձնեն աղօթքներն ասելու եղանակին և սովորեցնեն աշակերտներին աղօթելու ժամանակ եկեղեցում և տանը կանգնելու, երկրպագելու, անձը խաչակնքելու, ծունր դնելու և չոքելու ձևերը։

Ուսուցիչները պիտի ճշդութեամբ հսկեն, որպէս զի աշակերտները ընտելանան աղօթելու ճաշելուց առաջ և յետոյ, քնելուց առաջ և առաւօտեան զարթելուց և առհասարակ սովորեցնել թէ ե՞րբ և ո՞ր աղօթքը պիտի ասել։ Հսկելով աշակերտների կրօնական բարոյական զարգացմանը, լիայոյս ենք, որ ապագայում նորանք առաքինի և բարեպաշտ քրիստոնեաներ կըլինին և այդպիսով դրպրոցը, կրթութեան այդ ճիւղում, հասած իւր նպատակին։

ՊԵՏՐՈՍ ՔԱՀԱՆԱՅ ՏԷՐ-ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆՑ։

ի 10 Օգոստոսի 1897 ամի։

ի Շուշի։

ՆԱԽԱԳԻԾԵԼԻՔ

ԱՂՕԹՔԻ ԵՒ ՆՈՐԱ ԱՐՏԱՔԻՆ ՄԻ ՔԱՆԻ ՍՐԲԱԶԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ։

Մարդու խորին յարգանքով և ջերմեռանդութիւնով, Աստուծուն արած խնդրուածքը, կոչւում է աղօթք: Մենք մեր աղօթքներով խնդրում ենք Աստուծուց այն, ինչի մէջ կարիք ենք զգում։ Խնդրում ենք գործ սկսելու յաջողութիւն, շնորհք, իմաստութիւն պարգևել և այլն, բայց իրաւունք չունինք ոչ փող խնդրելու, ոչ հարստութիւն, ոչ ոսկի, արծաթ և լաւ, լաւ պաշտօններ. այդ ամենն Աստուծոյ անհուն ողորմութիւնից է կախուած՝ պարգևելու, կամ ոչ։ Շնորհակալութիւն ենք մատուցանում Աստուծուն՝ մեզ շնորհած պարգևների համար, գովում ենք կամ փառաբանում նորան։

Մեր աղօթքներով մենք չենք դառնում միայն դէպի Աստուած, այլ և դէպի սուրբ կոյս Մարիամը, դէպի սուրբ հրեշտակները և դէպի այն ամեն սրբերը, որոնք նահատակուել են կամ մեռել ճշմարիտ Աստու-

ածպաշտութեան և Քրիստոսի անուան համար։ Բայց դէպի սորանց այնպէս չենք վերաբերւում, ինչպէս դէպի Աստուած։ Դէպի սորանց մենք վերաբերւում ենք, որպէս միջնորդների, բարեխօս լինելու, մեր մեղաւոր բերանից դուրս եկած աղօթքները և խնդրուածքները հասցնելու Աստուծոյ աթոռի առաջ, մեր աղօթքներն ու խնդիրները հաճելի անելու Աստուծուն։ Մենք միայն մեզ համար չենք աղօթում, այլ և մեր ծնողների, եղբայրների, քոյրերի, ազգականների, բարեկամների, մեր ուսուցիչների, բարերարների և բոլոր կենդանիների, նոյնպէս և ննջեցեալների հոգիների համար։

Մենք Աստուծուց միայն կարող ենք ստանալ մեզ հարկաւորւող այն ամենը, ինչ որ կարևոր է մեզ մեր կեանքի վերաբերեալ։ Նա ամեն րոպէ պատրաստ է մեզ շնորհելու մեր խնդրածները։ Աստուծոյ մեծամեծ գործերը մենք միշտ տեսնում ենք, այդ պատճառաւ պարտաւոր ենք առանց դադարելու, ամեն ժամանակ աղօթել և խնդրուածք անել, փառաբանել կամ շնորհակալութիւն մատուցանել նորան։ Աղօթել մենք կարող ենք համարեայ թէ ամեն տեղ, որովհետև Աստուած ամեն տեղ է, ամեն տեղ էլ լսում մեր աղօթքը, մեր ձայնը, ամեն ժամանակ տեսնում մեզ և մեր գործունէութիւնը։ Այդ պատճառաւ և մենք պէտք է ամեն տեղ էլ աղօթենք Աստուծուն. սակայն աղօթելու ժամանակն առ հասարակ ընդունուած է. առաւօտեան երբ քնից զարթնում ենք և երեսներս լուանում։ Օրուայ ընթացքում էլ, երբ գործ ենք սկսում, գործ վերջացնում, աշխատելուց, կարդալուց առաջ և յետոյ,

ճաշելուց առաջ և ճաշից յետոյ և երեկոյեան քնելու ժամանակ։

Աստուածպաշտութեան կամ աղօթելու ժամանակ մենք կատարում ենք մի քանի *արքազան գործողութիւններ*, այն է արտաքին *նշաններ*. անձին խաչակնքել, երկրպագել, ծունր դնել, ծունկ չոքել, սըրբութիւններ համբուրել (խաչ, աւետարան և պատկերներ) խնկարկել և մոմ վառել։ Աղօթքը կատարում ենք ուղիղ կանգնած և ձեռներս կախ ձգած։ Այս նշաններով մենք Աստուծուն ցոյց ենք տալիս մեր կատարեալ հպատակութիւնը և որդիական խոնարհ պարտքը։ Եթէ այս արարողութիւնները կապուած չեն մեր ներքին հոգեկան զգացմունքի հետ, այն ժամանակ մեր աստուածպաշտութիւնը կամ աղօթքը ճշմարիտ չի կարող լինել, այլ միայն մի ձևական բան։ Ուստի և Աստուածպաշտութիւնը պէտք է կատարել խորին յարգանքով, ուշադրութիւնով, հեզութիւնով, հոգու և մարմնու հպատակութիւնով և ջերմեռանդութիւնով։

Անձին խաչակնքելը կատարւում է հետևեալ կարգով. ցուցամատը և միջի մատը հաւասար իրարից կպած ուղիղ բռնելով, իսկ անանուն և ճկոյթ մատերը ծալելով ափի մէջ և բութ մատը դնելով այդ երկու մատերի վերայ՝ ուղիղ բռնած երկու մատերի ծայրերը նախ դնել ճակատին, հնչելով Հօր անունը, յետոյ կրծքի ներքի մասին, հնչելով Որդւոյ անունը, ապա ձախ և աջ ծծատեղերին՝ հնչելով Հոգւոյն, ապա

սրբոյ անունը, իսկ յետոյ կրծքի մէջ տեղ՝ հնչելով ամէն։ Այս գործողութիւնը վերջանալուց յետոյ, սկսում ենք աղօթքը, կամ գործը։ Խաչակնքելով մեր անձը, մենք յիշում ենք մեր Փրկչի խաչի վրայի մահը, մարդկային ազգի փրկութեան համար, որ մահովը մահը խափանեց և յարութիւնովը մեզ կեանք պարգևեց։ Խաչակնքելով մեր անձը, արտայայտում ենք մեր հաւատը, որ Աստուծոյ Որդին, Յիսուս — Քրիստոս, երկնքից աշխարհ գալով, իւր չարչարանքով և Խաչի վրայի մահովը սրբագործեց մեր միտքը, զգացմունքը, ցանկութիւնը և գործերը և ազատեց մեզ սկզբնական մեղքից և մահից։ Խաչակնքում ենք մեր անձը, ոչ թէ միայն աղօթելու ժամանակ, այլ և ամեն մի գործ սկսելիս։ Մենք դորանով ցոյց ենք տալիս, որ մենք մեր յոյսը չենք դնում մեր ոյժերի և մարդկանց օգնութեան վերայ, այլ ապաւինում ենք Աստուծոյ օգնութեանը և Քրիստոսի խաչի զօրութիւնովը սպառնում, մեզ հանդիպող բոլոր ձախորդութիւններին յաղթելու։

Երկրպագութիւն տալը եւ գլուխ խոնարհեցնելը պէտք է կատարել հեզութիւնով, խոնարհութիւնով ու ջերմեռանդութիւնով։ Երկրպագութիւն տալու համար պէտք է մէջքից կռանալ դէպի առաջ, իսկ նորից ուղղահայեաց դիրք ստանալու ժամանակ, խաչակնքել և անձը։ Գլուխ խոնարհեցնելը կատարւում է խնկարկելու, սրբութիւններ համբուրելու ժամանակ։ Գլուխ խոնարհեցնելու ժամանակ, դարձեալ խաչակնքում ենք մեր անձը։ Գլուխ խոնարհեցնելը՝ կատարւում է գլխ-

ներիս կրծքներիս վերայ կռացնելովը։ Երկրպագութիւն տալովը և գլուխ խոնարհեցնելովը ցոյց ենք տալիս մեր ծառայութիւնը և հեզութիւնը Աստուծոյ առաջ, խոստովանւում ենք մեր մեղաւոր լինելը, իսկ միւս կողմից նշան է, որ մենք մասնակցում ենք Աստուածպաշտական աղօթքներին։

Ծնրադրութիւն, ժռանկ շոքել, պատկերներ եւ արքութիւններ հատրոռրել կատարելովը՝ ցոյց ենք տալիս մեր անպայման խոնարհութիւնը Աստուծոյ առաջ և հնազանդութիւն Նորա կամքին, դէպի որը մենք արժանի չենք մեր աչքերը դէպի վեր բարձրացնել։

Խնկարկել կամ մոմ վառել. ընդհանրապէս մարդիկ խունկ ծխելով, նպատակ ունին իրենց յարգանքներն ու նուէրները մատուցանել Աստուծուն, կամ սրբերին, քանի որ անձամբ չեն կարողանում մերձենալ Նորան։ Իսկ եկեղեցում խնկարկելով պատկերներին և ժողովրդին, ցանկանում ենք, որ Աստուծոյ օրհնութիւնը իջնի դորանց վերայ և իւրաքանչիւր աղօթք խնկի ծխի նման բարձրանայ դէպի Աստուած։ Սուրբ պատկերների առաջ մոմեր վառելով՝ ցոյց ենք տալիս մեր ջերմեռանդ յարգանքը և սէրը դէպի Նորանց։

Աղօթելուժամանակ պէտք է ուղիղ կանգնել, առանց վռազուելու, շփոթուելու, ուշադրութիւնով և ծանր ասել աղօթքը։ Աղօթքը սկսելիս և վերջացնելիս պէտք

է միշտ խաչակնքել անձը, իսկ եթէ աղօթքները կատարւում է եկեղեցիներում և ոչ ուսումնարաններում կամ տներում, պատկերների առաջ, այն ժամանակ, անձը խաչակնքելուց յետոյ, պէտք է և երկրպագել նորանց։ Աղօթելու ժամանակ սովորական է միշտ երեսով դէպի արևելք—աղօթարանը կանգնել։

ԱՌԱՋԻՆ ԲԱԺԻՆ

§ 1. ՅԱՆՈՒՆ ՀՕՐ ԵՒ ՈՐԴՒՈՅ ԵՒ ՀՈԳԻՈՅՆ ՍՐԲՈՅ. ԱՄԷՆ։

(խաչակնքել անձը)։

Հայրը, որդին և Հոգին սուրբը միասին ընդունում ենք մի Աստուած։ Առաջին անձը Հայր Աստուածն է, երկրորդը՝ Որդի Աստուածը և երրորդը՝ Հոգի սուրբ Աստուածը։

Մի Աստուած ունի երեք անձինք. Հայր, Որդի և Հոգի սուրբ։ Երեք անձինք բնութեամբ մեկ են, իսկ անձնաւորութեամբ յոկ, յոկ։ Երեք անձինքն ունին համահաւասար պատիւ, զօրութիւն և փառք։ Մի Աստուածը առանց իւր անձնաւորութիւններից մեկին, չի կարող կատարեալ Աստուած լինել։ Մի Աստուած ընդունում ենք երեք անձնաւորութիւնները միասին առած։ Երեք անձնաւորութիւններն ամենևին չի կարելի իրարից բաժանել, ինչպէս չի կարելի բաժանել արեգակից ոչ լոյսը և ոչ տաքութիւնը։ Ինչպէս արեգակից ծնւում է լոյս և բղխում ջերմութիւն, այնպէս էլ Աստուծուց ծնւում է Որդին և բղխում Հոգին սուրբը. ուրեմն Աստուծուց չի կարելի բաժանել ոչ Որդի Աստուածը և ոչ Հոգի սուրբ Աստուածը։ Դորանք անբաժան են և կոչւում են ամենասուրբ երրորդութիւն միասնական և անբաժանելի։ Որդուն անուանում ենք նաև Յիսուս—Քրիստոս։

Աստուած գերագոյն և ամենակատարեալ էակ է: Չի եղել այնպիսի մի ժամանակ, որ Աստուած եղած չըլլինի: Աստուած եղել է, կայ և պիտի լինի: Աստուած յաւիտենական է և աշխարհումս մի այնպիսի տեղ չըկայ, որտեղ Նա չըլլինի: Աստուած ամենայն տեղ է: Աստուած ամենաբարի է, որովհետև ամենքին էլ գերագոյն բարիք է ցանկանում. ամենիմաստ է, որովհետև մեր կատարած յայտնի և ծածուկ գործերը գիտէ, նոյնպէս և ամենակարող է: Աստուած ըստ էութեան անմարմին հոգի է:

Ամեն. նշանակում է. ճշմարիտ այդպէս է, թող այդպէս լինի: Մենք մեր բոլոր աղօթքները կատարում ենք Հօր, Որդու և սուրբ Հոգու (Աստուծոյ) անունով:

Ո՞ր անձնաւորութիւններն են 'ի միասին առած կոչւում մի Աստուած: Անձնաւորութիւնների՞ց ո՞րն է առաջին Աստուածը: Ո՞րը երկրորդը: Ո՞րը երրորդը: Մի Աստուած քանի՞ անձինք ունի: Որո՞նք են: Դորանք ի՞նչով են մէկ և ինչո՞վ ջոկ, ջոկ: Երեք անձինքը համահաւասար պատիւ ունի՞ն, թէ ո՛չ: Համահաւասար էլ ի՞նչ ունին: Աստուած առանց իւր անձնաւորութիւնների՞ց մէկին կամ միւսին կարո՞ղ է կատարեալ Աստուած լինել: Արեգակից ի՞նչ է ծնւում: Աստուծուց ո՞րն է ծնւում և ո՞րը բղխում: Կարելի՞ է արեգակից բաժանել լոյսը կամ տաքութիւնը: Կարելի՞ է Աստուծուց բաժանել Որդին կամ Հոգին սուրբը: Դորանք ի՞նչպէս են կոչւում: Երկրորդ անձնաւորութեան, Որդուն, էլ ի՞նչ ենք անուանում:

Աստուած ի՞նչպիսի՞ էակ է: Եղած է՞ այնպիսի ժամանակ, որ Աստուած եղած չըլլինի: Այժմ էլ Աստուած կա՞յ: Աստուած ժամանակաւոր է՞: Աստուած միայն մի տեղ է՞ լինում, թէ ամենայն տեղ: Աստուած ի՞նչպիսի՞ յատկութիւններ ունի՞ (ամենաբարի, ամենիմաստ և ամենակարող): Աստուած ըստ էութեան

ինչպիսի մարմին և հոգի ունի։ Ի՞նչ է նշանակում ամէն։ Մենք մեր բոլոր աղօթքներն ո՛ւմ անունով ենք սկսում կատարելու։

§ 2. ՏԷՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՕԹՔ։

Հա՛յր մեր, որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո, եկեսցէ արքայութիւն քո, եղիցին կամք քո որպէս յերկինս և յերկրի. զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր և թող մեզ զպարտիս մեր, որպէս և մենք թողումք մերոց պարտապանաց և մի՛ տանիր զմեզ 'ի փորձութիւն, այլ փրկեա՛ զմեզ 'ի չարէ, զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս. ամէն։

Մեր հա՛յր, որ երկընքումն ես, սուրբ լինի քո անունը, գայ քո թագաւորութիւնը. քո կամքը լինի ինչպէս երկնքումը, այնպէս էլ երկրի վրայ։ Մեր ամենօրուայ հացը տո՛ւր մեզ այսօր, թող մեզ մեր պարտքերը, ինչպէս որ մենք էլ մեր պարտականներին ենք թողնում. մի՛ ձգիր, մեզ փորձանքի մէջ, այլ չարից ազատի՛ր, որովհետև քոնն է թագաւորութիւնը, զօրութիւնը և փառքը յաւիտեանս. ամէն։

Այս աղօթքը կոչւում է տէրունական, որովհետև աւանդեց մեզ մեր Տէր Յիսուս—Քրիստոսը։

Տէրունական աղօթքը եօթը խնդիրներից է բաղկացած և սկսւում է կոչոնմով ու վերջանում փառաբանութիւնով։

ԿՈՉՈՒՄՆ Է. Մեր հայր, որ երկնքումն ես։ Սորանով մենք Աստուծուն անուանում ենք մեր հայր, որովհետև՝

ա. Ինքն Աստուած իւր ողորմութիւնովը մեզ քրիստոնեաներիս իւր որդիներ կոչեց։

բ. Նա սիրում է մեզ, ինչպէս հայր և իւրաքանչիւր բարի գործում օգնում է մեզ և

գ. մենք պարտաւոր ենք սիրով և յուսով վերաբերուիլ Նորան, ինչպէս որդիքը-հօրը։

Աստուծուն մենք անուանում ենք երկնաւոր հայր, որովհետև Նորա փառքի աթոռը երկնքումն է, որտեղ ապրում են սուրբ հրեշտակները, բոլոր սրբերը և դորանով մեր յիշողութեան առաջն ենք բերում, որ աղօթելուց, պարտաւոր ենք մտածել միայն երկնայինի վերայ, թողնելով բոլոր երկրային ոչնչականութիւնը։ Աստուծոյ փառքի աթոռը թէև երկնքումն է, բայց Նա ամեն տեղ է լինում։

ԱՌԱՋԻՆ ԽՆԴԻՐ։ Սուրբ լինի քո անունը։ Այս խօսքերով մենք խնդրում ենք, որ Տէրը մեզ, իւր որդիներին, օգնի ապրելու անարատ և մեր բարի գործերով մարդկանց մէջ տարածելու Նորա սուրբ անուան փառքը, որպէս զի նորանք էլ, տեսնելով մեր բարի գործերը, փառաբանեն մեր երկնաւոր-հօրը։

ԵՐԿՐՈՐԴ ԽՆԴԻՐ։ Գայ քո թագաւորութիւնը։ Այս խօսքերով մենք խնդրում ենք Տէրից, որ Նա հիմնելով երկրումն իւր ողորմութեան թագաւորութիւնը-եկեղեցին և մեզ քրիստոնեաներիս ընդունելով իւր այդ թագաւորութեան մէջ, օգնի մեզ իւր երկրային թագաւորութեան հարազատ որդիքը լինելու, այսինքն լինել քրիստոնեաներ, ոչ թէ միայն անունով, այլ և կեանքով,

գործով ու հաւատով։

ԵՐՐՈՐԴ ԽՆԴԻՐ։ Քո կամքը լինի ինչպէս երկնքումը, այնպէս էլ երկրի վերայ։ Մենք խնդրում ենք Աստուծուց, որ Նա մեզ՝ իւր թագաւորութեան որդիներին օգնի, երկրռում կատարելու Նորա կամքն այնպէս, ինչպէս կատարում են երկնքում սուրբ հրեշտակները և միևնոյն ժամանակ մեր պատրաստակամութիւնն ենք յայտնում Նորանից ընդունելու այն բոլորը, ինչ որ Իրեն հաճելի է մեզ պարգևելու։

ՉՈՐՐՈՐԴ ԽՆԴԻՐ։ Մեր ամենօրուայ հացը տուր մեզ այսօր։ Այս խօսքերով խնդրում ենք, որ տէրը, ամեն օր մեզ տայ մեր մարմնոյ և հոգւոյ բոլոր կերակուրները, այն է՝ կերակուր, հագուստ, բնակարան և շնորհք՝ վարելու Աստուածային պատուիրանները և սուրբ խորհուրդները։

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԽՆԴԻՐ։ Թող մեզ մեր պարտքերը, ինչպէս որ մենք էլ մեր պարտականներին ենք թողնում։ Այստեղ պարտքերը կոչւում են մարդու մեղքերը։ Մենք պարտաւորուած ենք կատարելու Աստուծոյ սահմանած օրէնքները և երբ այդ օրէնքների հակառակ ենք գնում, չենք կատարում, նշանակում է յանցանք ենք գործում և դառնում Աստուծոյ պարտական։ Իսկ պարտապանները կոչւում են այն մարդիկը, որոնց դէմ որևէ բանով յանցանք ենք գործում։ Մենք Աստուծուն խնդրում ենք թողնել, ներել մեր պարտքերը, այսինքն մեր մեղքերը։ Այդ խնդրին աւելացնում ենք, որ Տէրը թողնի, ների մեր պարտքերը, մեղքերը, այնպէս, ինչպէս մենք թողնում ենք մեզ դէմ յանցանք գործողներին. որովհետև Նա խոստացել է մեզ թողնել մեր պարտքերը, միայն այն դէպքում, երբ մենք էլ մեր կողմից

կը թողնենք մեզ դէմ յանցանք գործողներին։

ՎԵՑԵՐՈՐԴ ԽՆԴԻՐ։ Եւ մի՛ ձգիր մեզ փորձանքի մէջ։ Փորձութիւն կոչւում են կեանքի այն դէպքերը, որոնցով մենք հեշտութեամբ ընկնում ենք մեղքի մէջ։ Փորձութիւններ մարդուն պատահում են մարմնոյ թուլութիւնից, մարդկանց վատ օրինակներից և սատանայի խաբեբայութիւններից։ Մենք Աստուծուց խնդրում ենք, որ Նա մեզ ազատի այդ փորձանքներից։ Եթէ Աստուծուն հաճելի է փորձութիւններով կատարելագործել մեզ բարի գործերի և առաքինի կեանքի մէջ, այդ իսկ պատճառաւ խնդրում ենք, որ Նա օգնի մեզ յաղթելու փորձանքներին և ազատ մնալու յանցանքներ գործելուց։

ԵՕԹՆԵՐՈՐԴ ԽՆԴԻՐ։ Այլ չարից ազատիր։ Այս խօսքերով խնդրում ենք Աստուծուց, որ Նա մեզ հեռացնի բոլոր չար գործերից, վտանգներից և սատանայի խաբեբայութիւններից։

ՓԱՌԱԲԱՆՈՒԹԻՒՆ։ Որովհետև քոնն է թագաւորութիւնը զօրութիւնը և փառքը, յաւիտեանս. ամէն։ Այս խօսքերով մենք արտայայտում ենք մեր խոնարհ եռ ջերմեռանդ սէրը, փառաբանելով Աստուծուն և յոդնապրելով՝ ստանալու մեր բոլոր խնդրածները։ Ասում ենք քոնն է արքայութիւնը և զօրութիւնը և փառքը յաւիտեանս. ամէն։ Նորա թագաւորութեան մէջն է գտնւում մեր բոլոր խնդրածները և Նա զօրութիւն ունի տալու մեզ մեր խնդրածները և ունի յաւիտենական փառք, որով մենք էլ պիտի լինինք բարի և ողորմած։

Այս աղօթքն ինչո՞ւ է կոչւում Տէրունական։ Տէրունական աղօթքը քանի՞ խնդիրներից է բաղկացած։ Ինչո՞ւ ենք Աստուծուն

մեր Հայր կոչում։ Ինչու՞ ենք ամեն տեղ լինող Աստուծուն կոչում երկնային։ Ի՞նչ ենք սովորում երկնային Աստուած կոչելովը։ Աստուած միայն երկնքումն է լինում։

Աստուծուց մեր առաջին խնդրածն ի՞նչ է։ Ինչու՞ ենք խնդրում խօսքերով. «Սուրբ լինի քո անունը,» ինչով կարող ենք ծառայել Աստուծոյ և Նորա սուրբ անունը փառաւորելու։ Ինչու՞ ենք խնդրում խօսքերով. «Գայ քո թագաւորութիւնը։» Ո՞ր թագաւորութեան համար է խօսւում, այս խնդրում։ Ինչու՞ ենք մեզ համար խնդրում, երբ արդէն պատկանում ենք Աստուծոյ երկրային թագաւորութեանը։

Ինչու՞ ենք խնդրում խօսքերով. «Քո կամքը լինի։» Ինչու՞ ենք աւելացնում. «Ինչպէս երկնքումը» խօսքերը։

Ո՞րն է չորրորդ խնդիրը։ Ի՞նչ ենք հարկանում. «մեր ամենօրուայ հացը» ասելով։

Ո՞րն է հինգերորդ խնդիրը։ Ի՞նչ է նշանակում. «Թող մեզ մեր պարտքերը։» Ինչու՞ ենք մեր մեղքերը պարտք կոչում։ Ինչու՞ մենք մեր պարտքերը թողնելու խնդրում աւելացնում ենք. «Ինչպէս որ մենք էլ մեր պարտականներին ենք թողնում։» Որոնց ենք կոչում մեր պարտապաններ։

Ո՞րն է վեցերորդ խնդիրը։ Ի՞նչ է նշանակում փորձութիւն։ Ինչի՞ցն է կեանքի մի քանի դէպքերը մեզ փորձութեան մէջ ձգում։ Կարող են արդեօք փորձութիւնները մեր հոգուն օգուտ բերել։ Ինչու՞ ենք խնդրում Աստուծուց, երբ իմանում ենք, որ Նորան հաճելի է մեզ փորձութիւնների ենթարկելու, որպէս-զի դորանք օկտակար դառնան մեզ։ Փորձութիւններն ինչով են մեզ վնաս տալիս։ Ի՞նչպէս կարող ենք ազատուել փորձութիւններից։

Ո՞րն է եօթներորդ խնդիրը։ Ի՞նչ է նշանակում. «այլ չարից ազատի՛ր։» Ո՞ր բանն է չար։ Մեր աղօթքն ինչով ենք վերջացնում։ Ի՞նչ խօսքերով ենք փառաբանում Աստուծուն։

§ 3. ԱՂՕԹՔ ԴԱՍԻՑ ԱՌԱՋ։

Ամենաբարի Աստուած, առաքեա՛ առ մեզ

Ո՛վ ամենաբարի Աստուած, ուղարկի՛ր դէպի

զշնորհս Հոգւոյդ Քո սրբոյ, զի պարգևեսցէ մեզ զմիտս և կազդուրեսցէ զզօրութիւնս հոգւոց մերոց, որպէս-զի մեք ընդունելով զաւանդեալ մեզ ուսմունս՝ զարգասցուք Քեզ ստեղծողիդ մերում 'ի փառս, ի մխիթարութիւն ծնողաց մերոց և յօգուտ եկեղեցւոյ և հայրենեաց։

մեզ Քո սուրբ Հոգուդ շնորհքը, որ մեզ միտք պարգևի և զօրացնի մեր հոգևոր կարողութիւնները, որպէս-զի մենք ընդունելով մեզ տուած ուսմունքը՝ մեծանանք Քեզ ստեղծողիդ փառք տալու, մեր ծնողներին մխիթարելու և եկեղեցուն ու հայրենիքին օգտակար լինելու։

Այս աղօթքի մէջ մենք Աստուծուն անուանում ենք ամենաբարի, որովհետև Աստուած ամենքին էլ բարիք է ցանկանում։ Աստուծուց խնդրում ենք, ա) որ իւր սուրբ Հոգու շնորհով մեզ միտք պարգևի և բ) զօրացնի մեր հոգևոր կարողութիւնները (խելք, յիշողութիւն և ուշադրութիւն)։ Այդ խնդրում ենք այն պատճառաւ, որ դորանց օգնութիւնովը լսենք մեզ աւանդած ուսմունքները։ Դորանից յետոյ գ) պարզ յայտնում ենք թէ ինչու համար ենք մենք ուսումն ստանում. «որ մեծանանք քեզ ստեղծողիդ փառք տալու, մեր ծնողացը մխիթարելու և եկեղեցուն ու հայրենիքին օգտակար լինելու։»

Այս աղօթքով մենք Աստուծուն ինչ ենք անուանում։ Ի՞նչ կը նշանակէ ամենաբարի։ Աստուծուց ինչ ենք խնդրում։ Հոգւոյն սրբոյ շնորհքը մեզ ինչ օգուտ կարող է բերել։ Ինչու համար ենք կարդում։ Որ մեծանանք ինչ պիտի անենք։

§ 4. ԱՂՕԹՔ ԴԱՍԻՑ ՅԵՏՈՅ։

Գոհանամք զՔէն Արարիչ, զի արժանի արարեր զմեզ շնորհաց Քոց, ընդունելութեան ուսմունս. օրհնեա՛ զմեծաւորս, ըզծնողս և զուսուցիչս մեր, որք առաջնորդեն մեզ 'ի գիտութիւն բարութեան և տո՛ւր մեզ զկարողութիւն 'ի շարունակութիւն ուսմանս այսորիկ։

Շնորհակալ ենք Քեզանից, ո՛վ Արարիչ, որ Քո շնորհովն արժանացրիր մեզ ուսմունք ստանալու։ Օրհնի՛ր մեր մեծաւորներին, ծնողներին և ուսուցիչներին, որոնք առաջնորդում են մեզ բարի բաներն իմանալու։ Եւ մեզ կարողութիւն տո՛ւր, որ այսուհետև ևս շարունակենք այս ուսումը։

Այս աղօթքի մէջ Աստուծուն մենք անուանում ենք Արարիչ։ Արարիչ նշանակում է — ստեղծող։

Այս աղօթքով նախ՝ շնորհակալութիւն ենք յայտնում Արարչին, որ Ս. Հոգու շնորհովը արժանացրեց մեզ ուսումն ստանալու։ Ապա խնդրում ենք, ա) օրհնել մեր մեծաւորներին, ծնողներին և ուսուցիչներին, որոնք առաջնորդում են մեզ բարի բաներ սովորելու. և բ) իսկ մեզ էլ ոյժ ևս կարողութիւն տալու մեր ուսումը շարունակելու։

Դէպի ո՞ւմն ենք դառնում այս աղօթքով։ Ի՞նչ է նշանակում Արարիչ։ Ինչո՞ւ համար ենք շնորհակալ դառնում Արարչից։ Այս աղօթքով ի՞նչ ենք խնդրում Նորանից։ Ինչո՞ւ համար պէտք է օրհնել մեր մեծաւորներին, ծնողներին և ուսուցիչներին։ Յետոյ մեզ համար ի՞նչ ենք խնդրում։

§ 5. ԱՂՕԹՔ ՃԱՇԻՑ ԱՌԱՋ։

Աչք ամենեցուն 'ի քեզ, Տէր, յուսան և Դու տաս կերակուր նոցա 'ի ժամու։ Բանաս զձեռն քո և լցուցանես զամենեսեան քաղցրութեամբ կամօք քովք։

Ամենքի աչքերը դէպի քեզ են նայում, Տէր, և դու տալիս ես նորանց կերակուրը ժամանակին։ Բաց ես անում քո ձեռքը և լիացնում ես ամենքին քո ողորմութիւնովը։

Այս աղօթքով Տիրոջ ուշադրութիւնն ենք հրաւիրում, որ ամենքի աչքերը յուսով դէպի Նորան են նայում, ժամանակին իրենց կերակուրը ստանալու։

Մինչև ճաշելն ինչ աղօթքով ենք դիմում Աստուծուն։ Ամենքի կերակուրն ով է տալիս։ Աստուած կարող է և խնդրողներին կերակուր չըտալ։ Աստուած աւելի որոնց է առատ կերակուր տալիս։ Աղօթում էք դուք էլ մինչև ճաշելը։

§ 6. ԱՂՕԹՔ ՃԱՇԻՑ ՅԵՏՈՅ։

Փառք քեզ Տէր, փառք քեզ թագաւոր փառաց, որ ետուր մեզ կերակուր ուրախութեան և լցուցեր զսիրտս մեր 'ի լիութենէ ամենաբաւական ողոր-

Քեզ փառք, Տէր, քեզ փառք փառաց թագաւոր, որ տուիր մեզ ուրախութեան կերակուր և լիացրիր մեր սիրտը քո ամենաառատ ողորմու-

մութեան Քո։ Լցո՛ և զմեզ հոգւով Քով սրբով, որպէս զի գտցուք առաջի Քո հաճոյք, և մի՛ ամաչեցեալք զի Դու գաս և հատուցանես իւրաքանչիւր ըստ գործս իւր։

թեան լիութիւնովը։ Լիացրո՛ւ և մեզ Քո սուրբ հոգւովը, որ մենք Քո առաջին հաճելի լինինք և չամաչենք, որովհետև Դու գալու ես և վարձատրելու ամենքին իւր գործին համեմատ։

Այս աղօթքով մենք Աստուծուն անուանում ենք փառաց թագաւոր և շնորհակալութիւն յայտնում, որ մեզ կերակուր տուաւ։ Եւ խնդրում ենք, ա) որ մեզ լիացնի սուրբ հոգւովը, բ) որ հաճելի լինինք և չամաչենք Աստուծուց, որովհետև ժամանակին Նա գալու է և ամեն մէկին իւր գործին համեմատ վարձատրելու է։ Ով աշխատասէր և առաքինի կը լինի, իւր դասերը ժամանակին կը պատրաստի և Աստուծոյ դրած և իւր ուսուցչի տուած պատուիրանները կը պահպանի, նա աւելի վարձ կը ստանայ, իսկ ծոյլերը քիչ, կամ գրեթէ ոչինչ։

Այս աղօթքով ինչ խօսքերով ենք շնորհակալութիւն յայտնում Աստուծուն։ Մենք խնդրում ենք էլ ինչո՞վ մեզ լիացնելու։ Ինչո՞ւ ենք ցանկանում սուրբ Հոգւով էլ լիանալու։ Ժամանակին մենք մեր գործերին համեմատ վարձ ստանալու ենք, թէ ո՞չ։

Ո՞վ կարող է լաւ վարձ ստանալ և ո՞վ քիչ։ Դուք էլ էք ճաշից յետոյ աղօթում։

§ 7. ԵՐԳ 'Ի ԴԷՄՍ ՈՐԴԻՈՑՆ ԱՍՏՈՒԾՈՅ։

Սուրբ Աստուած, սուրբ և հզօր, սուրբ և անմահ, որ խաչեցար վասն մեր, ողորմեա՛ մեզ (երիցս կրկնեա՛)։

Սուրբ Աստուած, սուրբ և հզօր, սուրբ և անմահ, դու որ մեզ համար խաչուեցիր, ողորմի՛ր մեզ (երեք անգամ կրկնի՛ր)։

Այս աղօթքով խնդրում ենք Աստուածորդուց, որ խաչի վրայի իւր մահվով մեզ ազատութիւն պարգևեց և մեղքից ազատեց, ողորմի մեզ։

Այս աղօթքով ինչ ենք խնդրում։ Մենք ում իշխանութեան տակ էինք, որ Քրիստոս մեզ ազատեց։

§ 8. ԱՂՕԹՔ ԱՌ ՍՈՒՐԲ ԿՈՅՍՆ։

Փառաւորեալ և օրհնեալ միշտ սուրբ կոյս Աստուածածին Մարիամ մայր Քրիստոսի, մատո՛ զաղաչանս մեր որդւոյ քո և Աստուծոյ մերոյ։

Ո՛վ դու փառաւորուած և օրհնուած միշտ սուրբ կոյս՝ Քրիստոսի մայր՝ Մարիամ Աստուածածին, մեր աղօթքը հասցրո՛ւ քո որդուն և մեր Աստուծուն։

Այս աղօթքով խնդրում ենք Աստուծոյ Մօրից, որ մեր աղաչանքները մատուցանի իւր Որդուն և մեր Աստուծուն։

Այս աղօթքով Աստուծոյ մօրից ինչ ենք խնդրում։ Ինչու մենք անձամբ չենք խնդրում Քրիստոսից։

§ 9. ԱՂՕԹՔ ԹԱԳԱՒՈՐԻ ՀԱՄԱՐ։

Տէր Աստուած մեր, կեցո՛ զամենաբարեպաշտ թագաւորն և զկայսրն ամենայն Ռուսաց զՆԻԿՈԼԱՅ ԱԼԷՔՍԱՆԴՐՈՎԻՉՆ։ Զօրացո՛ զնա, օգնեա՛ զաւակաց և զօրաց Նորա՝ պահելով զամենեսին 'ի խաղաղութեան։

Տէր Աստուած մեր, կեանք տո՛ւր ամենաբարեպաշտ թագաւորին և ամենայն Ռուսաց կայսր ՆԻԿՈԼԱՅ ԱԼԷՔՍԱՆԴՐՈՎԻՉԻՆ։ Զօրացրո՛ւ Նորան, օգնի՛ր Նորա զաւակներին և զօրքերին և ամենքին էլ պահպանի՛ր խաղաղութեան մէջ։

Այս աղօթքով Աստուծուց խնդրում ենք.

ա) Ռուսաց և մեր Կայսր Նիկոլայ Ալէքսանդրովչին կեանք տալ և զօրացնել Նորան։

բ) Օգնել Նորա զաւակներին և զօրքերին, և

գ) Ամենքին էլ խաղաղութեան մէջ պահպանել։

Այս աղօթքով ի՞նչ ենք խնդրում Աստուծուց։ Նիկոլայ Ալէքսանդրովիչը մեր ի՞նչն է։ Պարտաւոր ենք մենք մեր Կայսեր համար էլ աղօթելու։ Էլ ո՞ւմ համար պիտի աղօթենք։ Զօրքերը մեզ ի՞նչ օգուտ են բերում։ Թշնամին ինչո՞վ կարող է մեզ վնաս տալ։

§ 10. ԱՂՕԹՔ ԱՌԱՒՕՏԵԱՆ։

Գոհանամք զ'քէն, Տէր Աստուած մեր, որ զարնոր հակալ ենք քեզանից, Տէր Աստուած մեր,

թուցեր զմեզ 'ի հանգըստենէ քնոյ շնորհիւ ողորմութեան Քո։ Զարթո՛ զմիտս մեր արդարութեամբ առ քեզ, Տէր Աստուած մեր, զի տեսցեն աչք մեր զփրկութիւն Քո։ Եկեսցէ և բնակեսցի առ մեզ Աստուածութիւն Քո և ողորմութիւն Քո հովանի և պահապան լիցի 'ի վերայ պաշտօնէից Քոց։ Եւ զմեզ զծառայս քո արժանի արա 'ի տուէ և 'ի գիշերի և յամենայն ժամու միշտ խորհիլ 'ի սէր պատուիրանաց Քոց և գոհանալով փառաւորել զՀայր և զՈրդի և զՍուրբ Հոգիդ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

որ քո ողորմութեան շնորհովը զարթեցրիր մեզ հանգիստ քնած տեղից։ Զարթեցրո՛ւ մեր միտքը արդարութիւնով դէպի քեզ, Տէր Աստուած մեր, որ մեր աչքերը տեսնեն Քո փրկութիւնը, գայ և բնակուի մեր մէջ Քո Աստուածութիւնը և Քո ողորմութիւնը հովանի և պահապան լինի Քո պաշտօնեաների վերայ։ Եւ մեզ, ծառաներիդ, արժանի արա՛ գիշեր և ցերեկ և ամենայն ժամանակ Քո պատուիրանների վերայ մտածել և շնորհակալութիւնով փառաւորել Հօրը և Որդուն և Սուրբ Հոգուն, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Այս աղօթքով մեր շնորհակալութիւնն ենք յայտնում մեր Տէր Աստուծուն, որ իւր ողորմութեան շնորհովը մեզ զարթեցրեց մեր հանգիստ քնած տեղից։ Զարթնելով քնից, իւրաքանչիւր մարդ իւր առաւօտեան աղօթքն ասելով խնդրում է Տէրից, որ

ա) Նա զարթեցնի մեր միտքն արդարութիւնով դէպի

իրեն, որպէս-զի ամեն բանի մէջ զգաստ լինինք:

բ) Որ մեր աչքերը տեսնին Նորա փրկութիւնը:

գ) Որ իւր Աստուածութիւնը միշտ մեր մէջ բնակուած լինի և ողորմութիւնը հովանի և պահապան լինի մեզ, և

դ) Արժանի անի մեզ, ամեն ժամանակ իւր պատուիրանների վերայ մտածելու:

Այս բոլոր պարգևների համար շնորհակալութիւնով պիտի փառաբանենք Նորան. հօրը, Որդուն և Սուրբ Հոգուն այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Առաւօտեան աղօթքով ինչո՞ւ ենք շնորհակալ դառնում Աստուծուց: Ի՞նչ ենք խնդրում Աստուծուց: Մեր աչքերը Աստուծոյ ի՞նչը կարող են տեսնել: Աստուածութիւնն ի՞նչպէս կարող է մեր մէջ բնակուիլ: Աստուծոյ ի՞նչը կարող է մեզ հովանի և պահապան լինել: Ո՞վ կարող է մեզ արժանացնել գիշեր և ցերեկ Աստուծոյ պատուիրանների վերայ մտածել: Այդ ամեն պարգևների համար մենք ինչո՞վ պիտի երախտահատոյց լինինք: Քնից զարթնելուց և երեսները լուանալուց յետոյ, պարտաւո՞ր ենք միշտ այս աղօթքն ասել, թէ ո՞չ:

§ 11. ԱՂՕԹՔ ԵՐԵԿՈՅԵԱՆ:

Տէր Աստուած մեր, Դու պահեա զմեզ խաղաղութեամբ 'ի գիշերիս յայսմիկ և յամենայն ժամանակի: Ընդ սուրբ երկիւղ քո բևեռեալ պահեա

Տէր Աստուած մեր, դու պահի՛ր մեզ խաղաղութիւնով այս գիշեր և ամեն ժամանակ: Քո սուրբ երկիւղիդ մէջ հաստատ պահի՛ր մեր միտքը և

զմիտս և զխորհուրդս մեր. որպէս-զի յամենայն ժամ քև պահպանեալ լիցուք յորոգայթից թշնամւոյն։ Եւ քեզ հանցուք զօրհնութիւն և զփառս Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

խորհուրդը, որ ամեն ժամանակ անփորձ և ազատ լինինք թշնամու որոգայթից։ Եւ քեզ տանք օրհնութիւն և փառք՝ Հօրը և Որդուն և Սուրբ Հոգուն. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Այս աղօթքով մենք Աստուծուն անուանում ենք Տէր։ Տէր նշանակում է գլխաւոր։

Տէրից մենք խնդրում ենք.

ա) Ամեն ժամանակ մեզ խաղաղութեան մէջ պահպանելու,

բ) Իւր Սուրբ երկիւղի մէջ հաստատ պահելու մեր միտքը և խորհուրդը, որ

գ) ամեն ժամանակ անփորձ և ազատ լինինք թշնամու որոգայթից և խոստանում ենք

դ) Տալ օրհնութիւն, ապա փառք Հօրը, Որդուն և Սուրբ Հոգուն այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Երեկոյեան աղօթքի մէջ Աստուծուն ինչ անուն ենք տալիս։ Ի՞նչ է նշանակում Տէր։ Մենք Աստուծուց ինչ ենք խնդրում։ Ինչո՞ւ ենք ասում. «Քո սուրբ երկիւղիդ մէջ հաստատ պահիր մեր միտքը և խորհուրդը։» Մեր թշնամիները մեզ ինչ կարող են անել։ Ինչո՞վ ենք կարող մեր թշնամիներին յաղթել։ Երեկոյեան աղօթքն ինչո՞վ է վերջանում։ Պարտաւոր ենք քնելու ժամանակ այս աղօթքն ասելու, թէ ոչ։

§ 12. ՇԱՐԱԿԱՆ ԾՆՆԴԵԱՆ։

Խորհուրդ մեծ և սքանչելի, որ յայսմ աւուր յայտնեցաւ, հովիւք երգեն ընդ հրեշտակս՝ տան աւետիս աշխարհի։

Ծնաւ նոր արքայ, 'ի Բեթղեհէմ քաղաքի, որդիք մարդկան օրհնեցէք, զիվասն մեր մարմնացաւ։

Անպատելին երկնի և երկրի 'ի խանձարուրս պատեցաւ, ոչ մեկնելով 'ի Հօրէ, 'ի սուրբ այրին բազմեցաւ։

Մեծ և զարմանալի խորհուրդ է, որ այսօր յայտնուեց, հովիւները հրեշտակների հետ երգում են և աշխարհին աւետիք տալիս։

Նոր թագաւոր ծնաւ Բեթղեհէմ քաղաքում, մարդկանց որդիք, օրհնեցէք, որովհետև Նա մեզ համար ծնաւ։

Նա, որի համար երկինք և երկիրը բաւական չեն, բարուրի մէջ փաթաթուեց, Հօրից անբաժան մնալով՝ սուրբ այրի մէջ բազմեց։

Ծննդեան շարականը մենք երգում ենք եկեղեցում Ծննդեան տօներին։ Երբ Քրիստոս ծնուեց, ամենից առաջ հրեշտակներն աւետիք տուին հովիւներին, որ դաշտում ոչխարներ էին պահում։ Այդ տօնը մինչև այսօր էլ մենք կատարում ենք։ Մենք էլ գնում ենք մեր բարեկամների և ծանօթների տները, աւետիք տալիս և շնորհաւորում Ծննդեան և Մկրտութեան տօնը։

Հրեշտակների աւետիքն այս էր. «Բեթղեհէմ քաղա-

քում նոր թագաւոր ծնաւ, մարդկանց որդիք օրհնեցէ՛ք, որովհետև նա մեզ համար ծնաւ։»

Այդ նոր թագաւորը մեր Տէր Յիսուս—Քրիստոսն էր։

Ծննդեան տօնին քահանաները հրեշտակների օրինակի պէս շրջում են իրենց ժողովրդականների տները և «խորհուրդ մեծ» երգելով աւետիք տալիս նորանց։

Մենք ծննդեան տօնը կատարում ենք Մկրտութեան տօնի հետ միասին։

(Ուսուցիչը պէտք է աշակերտներին պատմի Քրիստոսի ծննդեան և Մկրտութեան պատմութիւնը և պատմել տայ նորանց։)

Ծննդեան շաբաթը որտեղ ենք երգում։ Հրեշտակները հովիւներին ինչո՞ւ համար աւետիք տուին։ Դուք չէ՞ք գնում ձեր բարեկամների և ծանօթների տներն աւետիք տալու։ Հրեշտակների օրինակի պէս աւետիք տալու համար ովքեր են ժողովրդի տները չրջում։ Հրեշտակների աւետիքն ինչումն է կայանում։ Ո՞վ էր այդ նոր թագաւորը։

ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ

§ 1. ՍՈՒՐԲ ԿՈՅՍ ՄԱՐԻԱՄԻ ԾՆՈՒՆԴԸ ԵՒ ՏԱՃԱՐԻՆ ԸՆԾԱՅՈՒԼԸ։

Երբ մօտեցաւ աշխարհիս խոստացուած Փրկիչ—Քրիստոսի գալու ժամանակը, Պաղեստինում ապրում էին երկու բարեպաշտ մարդիկ, Յովակիմը և նորա կին Անանա։ Յովակիմը ծագում էր Դաւիթ մարգարէի ցեղից, իսկ Աննան Ահարօն քահանայապետի։ Նորանք որդի չունէին և այդ մասին շատ տխրւում էին։ Ջերմն աղօթում էին նորանք, որ Աստուած իրենց մի որդի պարգևի և դորա հետ ուխտ էին դրել, եթէ Աստուած կատարի իրենց խնդիրը, այն ժամանակ այդ որդուն նորան ընծայել։ Աստուած լսեց նորանց աղօթքը և մի աղջիկ պարգևեց, որին կոչեցին Մարիամ։ Երբ Մարիամը դեռ նորահաս մանուկ էր (3 տարեկան), Յովակիմը և Աննան իրենց ուխտը կատարելու համար, նորան օրիորդների ուղեկցութիւնով և վառած կանթեղներով, տարան տաճարը և կանգնեցրին սանդուղտների առաջին աստիճանի վերայ։ Սանդուղտների բարձրումը կանգնել էր քահանայապետը և տաճարի դռների մօտ ընդունեց և օրհնեց Աստուծուն ընծայ բերողներին։ Ուղղակի տաճարը ոչ ոք իրաւունք չունէր մտնելու, բացի քահանաներից, բայց Մարիամի հետ պատահեց հետևեալ անցքը. Նա ինքը բարձրացաւ Սանդուղտի տասնևհինգ աստիճանները և մօտեցաւ քահանայապետին։ Այն ժամանակ քահանայապետը, Աստուծոյ հրամանով, նորան տարաւ մինչև

անգամ «սրբութիւն սրբոց» կոչուած տեղը, տաճարի գլխաւոր մասը, որտեղ միայն ինքը կարող էր մտնել, այն էլ տարին մի անգամ։ Այստեղ սուրբ Հոգւոյ շնորհովը Մարիամը ազատ մնաց անմաքուր գործերից և յանցանքներից։

(Ս. կոյս Մարիամի ծնունդը տօնում ենք ամենայն տարի Սեպտեմբ. 8-ին, իսկ տաճարն ընծայումը Նոյեմբ. 21-ն)։

Ս. կոյս Մարիամի ծնողներն ովքեր էին։ Նորանք ում ցեղից էին։ Նորանք ինչու համար էին Աստուծուն շատ աղօթում։ Նորանք Աստուծուն ինչ ուխտ էին արել։ Աստուած նորանց խնդիրքը կատարեց։ Նորանք իրենց որդուն ինչ անուն դրին։ Մարիամի ծնողներն նորան ուր տարան, Աստուծուն ընծայելու համար։ Ո՞վ ընդունեց և օրհնեց Մարիամին։ Մարիամի հետ ինչ անցք պատահեց։ Քահանայապետը Մարիամին տաճարի որ մասը տարաւ։ Ուրիշ մարդիկ էլ կարող էին այն մասը մտնելու։ Նա տաճարում ինչպիսի՞ կրթութիւն ստացաւ։ Մարիամի ծնունդը և տաճարն ընծայումը երբ ենք կատարում։

§ 2. Ս. ԿՈՅՍ ՄԱՐԻԱՄԻՆ ԱՒԵՏԻՍ ՏԱԼԸ ԵՒ ՆՈՐԱ ԱՐԴԱՐ ԵՂԻՍԱԲԷԹԻՆ ԱՅՑԵԼԵԼԸ։

Ղուկաս. գլ. Ա. 26—56

Սուրբ կոյս Մարիամի տաճարում եղած ժամանակ, նորա ծնողները մեռան։ Երբ նա 14 տարեկան դարձաւ, դաստիարակները կամեցան նորան ամուսնացնել, բայց նա ասաց, որ ինքն Աստուծուն ուխտ է

դրել, միշտ կոյս մնալու։ Այն ժամանակ քահանաները նորան նշանեցին, նորա ազգական Յովսէփի ծերունու հետ և միևնոյն ժամանակ յայտնեցին նորան, թէ նա Աստուծուն ինչ ուխտ է դրած։

Յովսէփն ապրում էր Գալիլեայի Նազարէթ քաղաքում և պարապւում հիւսնութիւնով։ Մարիամն էլ նորա տան մէջ բնակուեց և իւր ձեռագործութիւնով օգնում էր նորան։

Մէկ անգամ երբ Մարիամը սուրբ գիրք էր կարդում, Գաբրիէլ հրեշտակապետը երևեցաւ նորան և ասաց. «Ուրախացի՛ր Մարիամ, Աստուած քեզ հետ է, օրհնուած ես դու կանանց մէջ։ Հոգին սուրբը կը գայ քեզ վերայ և բարձրեալի զօրութիւնը հովանի կը լինի քեզ, դու մի որդի կը ծնես և անունը կը դնես Յիսուս։ Նա մեծ կը լինի և բարձրեալի որդի կը կոչուի և Տէր Աստուած կը տայ նորան, նորա հօր, Դաւթի, աթոռը և նորա թագաւորութեանը վերջ չի լինիլ»։ Սուրբ կոյս Մարիամը խոնարհութիւնով ընդունեց այս բարի աւետիքը։

Հրեշտակապետից բարի աւետիք լսելով՝ Ս. կոյս Մարիամը շտապով գնաց Յուդայի քաղաքը (Երուսաղէմից դէպի հարաւ) իւր ազգական Զաքարիայի տունը, Եղիսաբէթի տեսութեան։ Եղիսաբէթն այդ ժամանակ ս. Հոգւով լցուած լինելով՝ և Մարիամին հանդիպելով՝ ասաց. «Օրհնուած ես դու կանանց մէջ և օրհնուած է քո որովայնի պտուղը։ Եւ որտեղի՞ց է ինձ այս ուրախութիւնը, որ իմ տիրոջ մայրը եկաւ ինձ մօտ»։ Ս. կոյս Մարիամը հրեշտակի աւետումը Եղիսաբէթից էլ լսելով՝ իւր երգերով փառաբանում էր Աստուծուն։ Նա երեք ամիս մնաց Եղիսաբէթի մօտ և ապա վերադարձաւ Նազարէթ։

(Ս. կոյս Մարիամի աւետման տօնը կատարում ենք ամենայն տարի Ապրիլի 7-ին։)

Յովակիմը և Աննան ապրեցին մինչև Մարիամի չափահաս դառնալը, թէ ոչ։ Նորանց մահից յետոյ Մարիամն ուում խնամքին մնաց։ Երբ նա չափահաս դարձաւ, քահանաներն ինչով վճռեցին նորա վիճակը։ Մարիամն ինչ պատասխանեց, երբ նորան առաջարկեցին ամուսնանալ։ Այն ժամանակ քահանաներն ինչ արին։ Նորանք Յովսէփին հասկացրին Մարիամի ուխտադրութիւնը։ Յովսէփն այդ ժամանակ որտեղ էր ապրում և ինչով պարապում։ Յովսէփի տանը Մարիամը ինչով էր պարապում։ Մարիամը ինչով իմացաւ, որ ինքը Աստուծոյ մայր է նշանակուած։ Գաբրիէլ հրեշտակապետն այդ մասին ինչպէս աւետեց։ Հրեշտակապետը նորա ապագայ որդու մասին ինչ ասաց նորան։ Մարիամն այդ աւետիքը հրեշտակապետից ինչպէս ընդունեց։ Աւետումից յետոյ Ս. Մարիամն ուր գնաց։ Եղիսաբէթը ինչպիսի ողջոյնով ընդունեց նորան։ Ինչու համար Եղիսաբէթը նորան տիրոջ մայր անուանեց։ Նա ինչպէս իմացաւ, որ Մարիամից պիտի ծնուի աշխարհի Փրկիչը։ Եղիսաբէթի աւետումին Մարիամն ինչ պատասխանեց։ Մարիամը Եղիսաբէթի մօտ երկար ժամանակ մնաց։ Ս. կոյս Մարիամի աւետման տօնը երբ ենք կատարում։

§ 3. ՔՐԻՍՏՈՍԻ ԾՆՈՒՆԴԸ ԵՒ ԲԵԹՂԵՀԷՄԻ ՀՈՎԻՒՆԵՐԻ ՆՈՐԱՆ ԵՐԿՐՊԱԳԵԼԸ։

Ղուկաս. գլ. բ. 1—21 Մատթ գլ. ա. 18—25

Քրիստոսի ծննդեան ժամանակը մօտեցել էր։ Այդ ժամանակներում Հռովմայեցւոց կայսրից հրաման դուրս եկաւ, ընդհանուր աշխարհագիր անելու։ Այդ պատճառաւ ամեն մի հրէայի հրամայուած էր իւր հայրենի

քաղաքը գնալու, որտեղից ծագում էին իրենց նախորդները։ Յովսէփն ու Մարիամը ծագում էին Դաւիթ թագաւորի ցեղից, այդ պատճառաւ Նազարէթից գնացին Բեթղեհեմ, Դաւթի քաղաքը։ Մարգարէների դուշակութեան համեմատ, Քրիստոս այդ քաղաքում պիտի ծնուէր։ Այստեղ նորանք իջևաններում իրենց բնակութեան համար տեղ չը գտան և գնացին մի այրի մէջ իջևանեցին, որտեղ հովիւները գիշերները, անձրևային և ցուրտ եղանակներին, պահպանում էին իրենց հօտը։ Հէնց միևնոյն այդ այրում գիշերը (աշխարհիս ստեղծագործութիւնից 5508 տարի անցած) Ս. կոյս Մարիամից ծնուեց Աստուծոյ Որդին, որ ոչ միայն հասարակ մարդ էր, այլ և միևնոյն ժամանակ և Աստուած։ Ս. կոյս Մարիամը Աստուած որդուն խանձարուրով պատեց և մսրի մէջ դրաւ։

Աշխարհիս Փրկչի ծնուելու մասին ամենից առաջ իմացողները Բեթղեհէմի հովիւներն էին։ Քրիստոսի ծնուելու գիշերը, նորանք իրենց հօտերով դաշտում էին՝ յանկարծ նորանց մէջ մի անսովոր լոյս երևաց և Աստուծոյ հրեշտակը մօտեցաւ նորանց և ասաց. «Մի վախենաք, ես ձեզ մեծ ուրախութիւն եմ աւետում, այժմ Դաւթի քաղաքում ձեզ համար Փրկիչ ծնուեց, որ է օծեալ Տէրը։ Եւ ահա ձեզ նշան. դուք կը գտնէք մանկանը խանձարուրում պատած և մսրում դրած»։ Այդ միջոցին երկնքում շատ հրեշտակներ երևացին, որ երգում էին. «Փառք Աստուծոյն բարձրումն եւ երկրի վերայ խաղաղութիւն եւ մարդկանց մէջ հաճութիւն»։ Երբ հրեշտակները անհետացան, նորից մութը պատեց։ Այն ժամանակ հովիւները գնացին այրը և այնտեղ գտան մսրում դրած և խանձարուրում պատած մանկանը։ Նո-

բանք երկրպագութիւն տուին Նորան, ինչպէս Աստուծու և պատմեցին Յովսէփին և Մարիամին այն, ինչ որ լսել էին և տեսել։

Հրէաների սովորութեան համեմատ ութերորդ օրը մանկանը թլփատեցին և անուանակոչեցին Յիսուս, որ նշանակում է Փրկիչ։

(Յիսուսի Ծննդեան տօնը մենք կատարում ենք ամենայն տարի մկրտութեան տօնի հետ միասին Յունվարի 6-ին)։

Յովսէփն ու Մարիամը այն ժամանակ որտեղ էին բնակւում, երբ Քրիստոս Պիտի ծնուէր։ Աստուած Քրիստոսի ծնուելու տեղն որտեղ էր որոշել։ Մարիամին ինչը ստիպեց Բեթղեհէմ գնալու։ Նա Բեթղեհէմում որտեղ իջևանեց։ Ո՞ր ժամանակ ծնուեց Քրիստոսը։ Քրիստոս ինչու համար էր կաչւում նաև Մարդ Աստուած։ Մարիամը մանուկին որտեղ դրաւ։ Առաջինն ովքեր իմացան մանկան ծնուելու մասին։ Այդ ժամանակ հովիւներն որտեղ էին։ Քրիստոսի ծնուելու մասին նորանց ով աւետիք տուաւ։ Նորանք ինչ արին լսելով այդ աւետումը։ Նորանք ում պատմեցին հրեշտակներին տեսնելը։ Քրիստոսին ինչ անուն դրին։ Քանի՞երորդ օրը նորա անունը դրին և ինչ սովորութիւն կատարուեցաւ։ Մենք ծննդեան տօնը ե՞րբ ենք կատարում։

§ 4. ՔՐԻՍՏՈՍԻ ՔԱՌԱՍՆՕՐԵԱՅ ԳԱԼՈՒՍՏՆ 'Ի ՏԱՃԱՐ ԿԱՄ ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋ։

Ղուկաս. գլ. բ. 22—38

Մովսիսական օրէնքի համեմատ, ամեն մի անդրանիկ արու զաւակի, ծննդեան քառասներորդ օրը, տանում էին տաճարը և այնտեղ նորա համար Աստուծուն մատաղ անում, հարուստները մի, մի հորթ կամ ոչխար,

իսկ չքաւորները մի զոյգ աղաւնու ձագ։ Ս. կոյս Մարիամն ու Յովսէփը իրենց որդուն տարան տաճարը և մատաղ անելու համար էլ երկու աղաւնու ձագ։ Այդ ժամանակ Երուսաղէմի տաճարում բնակւում էր Սիմէոն ծերունին, որին Սուրբ Հոգին առաջուց յայտնել էր, որ ինքը չի մեռնիլ, մինչև չը տեսնի Քրիստոսին։ Սիմէոնը հանդիպեց մանկանը տաճարում և Աստուծոյ յայտնելովն իմացաւ, որ նա ինքն է աշխարհի Փրկիչը։ Նա Յիսուսին իւր գիրկն առաւ, փառք տուաւ Աստուծուն և ասաց. «Տէ՛ր, այժմ Քո խօսքի համեմատ արձակիր Քո ծառային խաղաղութիւնով, որովհետև իմ աչքերս տեսան Փրկչին, որին պատրաստեցիր ժողովրդի համար։ Դա է հեթանոսների շողը և իսրայէլացիների փառքը»։ Յետոյ նա գուշակեց, որ «հրէաներից շատերը կը հաւատան Նորան և կը փրկուին, իսկ շատերն էլ չեն հաւատալ և կը կորչին։ Իսկ Նորա մօրը այնպիսի մի տրտմութիւն կը պատահի, որ կը կարծի թէ իրա սիրտը նիզակ են խոցել»։ Սիմէոն ծերունուն մենք անուանում ենք Աստուածընկալ։ Այդ ժամանակ տաճարումն էր 84 տարեկան այրի Անանա Մարգարէուհին, նա էլ փառաբանեց Աստուծուն և ամենքին յայտնեց, որ Մանուկ Յիսուսը աշխարհիս խօստացուած Փրկիչն է։

Տեառնընդառաջի տօնը մենք միշտ կատարում ենք Փետրվարի 14-ին։

Նորածին մանկանց համար հրէաներն ինչ սովորութիւն ունէին։ Մարիամն ինչպիսի զոհ տարաւ։ Քրիստոսի մասին տաճարումն իմացող գտնուեց։ Սիմէոն ծերունին ինչ ասաց Աստուծոյ մանկան մասին։ Նա Ս. Մարիամի համար ինչ գուշակեց։ Աննան ինչ ասաց։ Տեառնընդառաջի տօնը մենք երբ ենք կատարում։

ՄՈԳԵՐԻ ԵՐԿՐՊԱԳՈՒԹԻՒՆԸ։ ՅՈՎՍԷՓԻ ԵՒ ՄԱՐԻԱՄԻ ԵԳԻՊՏՈՍ ՓԱԽՉԻԼԸ ԵՒ ԱՅՆՏԵՂԻՑ ՎԵՐԱԴԱՌՆԱԼԸ։

Մատթ. գլ. բ. 1—23 Ղուկաս. գլ. բ. 39—40
Մարկ. գլ. գ. 3.

Քրիստոսի ծննդեան ժամանակներում արևելեան կողմից մոգեր, այսինքն իմաստուն մարդիկ, եկան Երուսաղէմ և հարցնում էին. «Ո՞ւր է հրէաների նորածին թագաւորը». մենք տեսանք, ասում էին նորանք, «նորա աստղը արևելքում և եկանք նորան երկրպագութիւն տալու»։ Մոգերի հարցմունքը շփոթեցրին Հէրովդէս թագաւորին և նա հարցրեց հրէից դպիրներին թէ. «Ո՞ր տեղ պիտի ծնուի Քրիստոսը»։ Նորանք պատասխանեցին. «Բեթղեհէմ քաղաքում. մարգարէներից այդպէս է գրուած»։ Այն ժամանակ թագաւորն այդ մասին յայտնեց մոգերին և խնդրեց նորանց։ «Երբ գտնէք մանկանը, ինձ էլ յայտնեցէք, որ ես էլ գնամ երկրպագութիւն տալու»։ Մոգերը գնացին Բեթղեհէմ և տեսան այն գերբնական աստղը, որ իրենք տեսել էին արևելքում, կանգնած է մէկ տան վերայ։ Նորանք մտան այդ տունը և գտան այնտեղ Մանկանը իւր մօր հետ, երկրպագութիւն տուին նորան, ինչպէս Աստուծու և մատուցին իրենց ընծաները։ Նորանք ցանկանում էին վերադառնալ Երուսաղէմ և Մանկան մասին պատմել թագաւորին, բայց միւս գիշերը, քնի մէջ երազում, Աստուծուց հրաման առան, որ Հէրովդէսի մօտ չը դառնան և ուրիշ ճանապարհով գնացին իրենց երկիրը։

Հերովդէսն երբ իմացաւ, որ մոգերն իրենց տունն են վերադարձել, հրամայեց Բեթղեհէմի մէջ եղած մինչև երկու տարեկան հասակն ունեցող բոլոր մանուկներին կոտորել։ Նա յուսով էր, որ նորանց թւում կը սպանուէր և Յիսուսը, բայց Աստուծոյ հրամանով, Յովսէփն ու Մարիամը մանկան հետ, սպանողների գալուց առաջ, փախել էին Եգիպտոս։ Հերովդէսի հրամանով նորա ծառաները Բեթղեհէմում սպանեցին 14,000 մանուկ։ Դորանից յետոյ շուտով Հերովդէսն էլ մեռաւ, այն ժամանակ Յովսէփը Եգիպտոսից վերադարձաւ և Գալիլեայի Նազարէթ քաղաքում բնակուեցաւ։

Նազարէթում Յիսուսը մինչև իւր 30 տարեկան դառնալը, բնակւում էր Յովսէփի և Մարիամի մօտ և հնազանդւում նորանց։ Նա աճում էր և լցւում իմաստութիւնով և սիրով դէպի Աստուած և դէպի մարդիկ։ Նա օգնում էր Յովսէփին հիւանութեան գործում։

Հեթանոսներից Քրիստոսի ծնուելու մասին ովքեր իմացան։ Մոգերն ինչպէս իմացան։ Նորանք Քրիստոսին ինչպէս գտան։ Հերովդէսն ինչ մտքով նորանց օգնեց։ Մոգերը յետոյ Հերովդէսին յայտնեցին մանկան մասին։ Հերովդէսն այդ իմանալով ինչ արաւ։ Մանուկ Քրիստոսն ինչպէս ազատուեց այն մահից, որ Հերովդէսն էր պատրաստել։ Քրիստոս միշտ Եգիպտոսում մնաց։ Յետոյ Նա որտեղ բնակութիւն հաստատեց։ Քրիստոս Նազարէթում երկար ժամանակ մնաց։ Ինչպիսի կեանք էր անցկացնում այնտեղ։ Ինչով էր պարապւում։

ՍՈՒՐԲ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻՉ։

Ղուկաս. գլ. ա. 5—25 և 57—80 Մատթ. գլ. գ. 1—12
Ղուկաս. գլ. գ. 2—18։

Այն ժամանակ, երբ Քրիստոս պիտի ծնուէր, Հրէաստանում ապրում էին երկու բարեպաշտ մարդ Զաքարիայ քահանան և իւր կին Եղիսաբէթը։ Նորանք խորին ծերութեան էին հասել, բայց զաւակ չունէին։ Մի անգամ երբ Զաքարիան մտել էր տաճարի սրբութիւն սրբոցը՝ խունկ ծխելու, Գաբրիէլ հրեշտակապետը երևաց նորան և ասաց. որ քո աղօթքը լսելի դարձաւ Աստուծուն և Եղիսաբէթ կնոջից դ Յովհաննէս որդին կը ծնուի։ Նա Ս. Հոգուց շնորհք կը ստանայ մարդկանց պատրաստելու, աշխարհիս Փրկչին ընդունելու համար։ Նա Տիրոջ Կապրապետը կը լինի և կը պատրաստի նորա ճանապարհը։ Հրեշտակապետի գուշակութիւնը կատարուեց. վեց ամիս Քրիստոսի ծննդից առաջ Զաքարիային և Եղիսաբէթին մի որդի ծնուեց, որին կոչեցին Յովհաննէս։

Յովհաննէսը երիտասարդ հասակից սկսած անապատումն էր բնակւում, և կերակրւում էր մարախ և վայրենի մեղր ուտելով։ Նա միայն ջուր էր խմում։ Հագուստն ուղտի բրդից էր, իսկ գոտին մաշկեղէն։ Երբ նա երեսուն տարեկան դարձաւ, սկսեց Յորդանան գետի եզերքում քարոզել ժողովրդին, Քրիստոսի շուտ երևալու մասին։ Ժողովուրդն ամեն կողմից հաւաքւում էր նորա քարոզները լսելու։ Յովհաննէսն իւր մօտ եկողներին ասում էր. «Ապաշխարեցէք, որովհետև երկնքի

արքայութիւնը մօտեցել է, ապաշխարութեան արժանի պտուղ արէք»։ Եւ շատերը, Յովհաննէսի մօտ եկողներից, Յորդանան գետում մկրտուեցին նորանից, խոստովանելով իրենց մեղքերը։ Ամենքին էլ հրաւիրելով ապաշխարելու՝ Յովհաննէսը նորանց կարիքների համեմատ առանձին, առանձին խրատներ էր տալիս։

Յովհաննէսի մօտ եկան Փարիսեցիները, հպարտ իրենց արտաքին Աստուածպաշտութիւնովը, ողորմութիւն տալովը և պաս պահելովը։ Նորանք այդ շատ անգամ կատարում էին միայն մարդկանց ցոյց տալու համար և միևնոյն ժամանակ անողորմն էին դէպի աղքատները և դժբաղդները։ Նորանց հարցին. «Մենք ինչ պէտք է անենք»։ Մարգարէն պատասխանում էր. «Ով երկու հանդերձ ունի, թող մէկը չունեցողին տայ, կերակուր ունեցողը թող նոյնն անի»։ Նորա մօտ եկան և մաքսաւորները - Հռովմայեցւոց հարկահաւաքները - հրէաները նորանց ատում էին և խորշում։ Նորանց հարցին. «Մենք ինչ անենք»։ Յովհաննէսը պատասխանում էր. «Ժողովրդից օրէնքով որոշուած տուրքից աւելի մի առնէք»։ Զինուորները հարցրին. «Բայց մենք ինչ անենք»։ Յովհաննէսը նորանց էլ պատասխանեց. «Դուք էլ ոչ ոքի մի վիրաւորէք, ոչ ոքի մի զրպարտէք և ձեր ռոճկովը բաւականացէք»։

Յովհաննէս — Մկրտիչը երբ աշխարհ եկաւ։ Ո՞վքեր էին նորա ծնողները։ Զաքարիան գիտէր, որ իրեն որդի, մեծ մարգարէն պիտի ծնուի։ Ո՞վ և երբ նորան աւետիս տուաւ այդ մասին։ Զաքարիայի այդ որդուն ինչ անուն դրին։ Յովհաննէսն ինչպիսի կեանք էր վարում։ Ո՞րտեղից էր ստանում իւր կերակուրը։ Ի՞նչ հագուստ էր հագնում։ Նա որտեղ էր ապրում։ Նորա քարոզներն

ինչումն էր կայանում։ Նորանց հետ, որոնք խոստովանում էին իրենց յանցանքներն ինչ էր անում նա։ Նա փարիսեցիներին, դպիրներին և զինուորներին ինչպիսի խրատներ տուաւ։

§ 7. ՔՐԻՍՏՈՍԻ ՄԿՐՏՈՒԹԻՒՆԸ։

Մատթ. գլ. գ. 13—17. Մարկ. գլ. ա. 9—12. և Ղուկաս. գլ. գ. 21—22։

Մի անգամ շատերի թւում Յիսուսն էլ եկաւ Յորդանան, Յովհաննէսի մօտ, նորանից մկրտուելու։ Մարգարէն արգելեց նորան և ասաց.«Ես պէտք է քեզանից մկրտուիմ և Դու ես ինձ մօտ գալիս»։ Յիսուս նորան պատասխանեց, որ այս Աստուծոյ կամքն է և մարդիկ ամեն ժամանակ պիտի հնազանդուին նորան։ Այն ժամանակ Յովհաննէսը մկրտեց նորան։ Յիսուս մկրտուելուց յետոյ, երբ ջրից դուրս եկաւ և աղօթում էր, երկինքը բացուեց և Հոգին սուրբը աղաւնու կերպարանքով իջաւ նորա վերայ և երկնքից ձայն լսուեցաւ, որ ասում էր. «Դա է իմ սիրելի որդին, որին հաւանեցի»։ Յիսուսն այն ժամանակ մօտ երեսուն տարեկան էր։

Յիսուս մկրտուելուց յետոյ, հեռացաւ, գնաց անապատը, որտեղ քառասուն օր և քառասուն գիշեր ծոմ պահեց և աղօթքով պատրաստեց իւր անձը, մարդկանց մեղքից փրկելու մեծ գործի համար։ Այդ ժամանակ նա փորձուեց սատանայից և յաղթեց նորան Աստուծոյ խօսքով։

(Մկրտութեան տօնը մենք միշտ կատարում ենք Յունվարի 6-ին։)

Յովհաննէս Մկրտիչը Յիսուսին որտեղ պատահեց։ Յիսուս ինչու համար եկաւ Յովհաննէսի մօտ։ Յովհաննէսը համաձայնուեց

Յիսուսին մկրտելու։ Յիսուս Նորան ինչ ասաց։ Յիսուս քանի տարեկան էր երբ մկրտուեց։ Յիսուս մկրտուելուց յետոյ ո՞ւր գնաց։ Անապատում Նա ինչ արաւ։ Ինչո՞ւ համար քառասուն օր և քառասուն գիշեր ծոմ պահեց։ Այդ ժամանակ նա ո՞ւմնից փորձուեց։ Ցաղթեց սատանային, թէ յաղթուեց։ Ո՞ւմ խօսքով յաղթեց։ Մկրտութեան տօնը երբ ենք կատարում։

§ 8. ՔՐԻՍՏՈՍԻ ՀՐԱՇԱԳՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ։

Կարճ ժամանակի մէջ ամբողջ Հրէաստանում սկսեցին խօսել, Նազարէթցի Յովսէփի որդի, Քրիստոսի հրաշագործութիւնների մասին և ժողովուրդը խուռն բազմութիւնով գնաց Նորա յետևից։ Քրիստոս մի խօսքով խաղաղացրեց փոթորիկը, գնաց ջրի վերայ, ինչպէս ցամաքի վերայ, հինգ հացով և երկու ձկնով հինգ հազար մարդու կերակրեց և մի խօսքով մեռելներին յարութիւն տուաւ։

Մի առանձին ուրախութիւնով մօտեցան Քրիստոսին անբաղդ մարդիկը և Նորանցից ոչ մէկը առանց օգնութիւն և մխիթարութիւն ստանալու չը հեռացաւ Նորանից։ Կոյրերին Նա տեսցնել տուաւ, խուլերին լսել, անդամալոյծներին բժշկեց, բորոտներին սրբեց և դիւահարներին չար ոգիներից ազատեց։ Ոչ ոքի Նա չը հեռացրեց իրենից, ուրիշներից ատելի դարձած, մեղաւոր և հեթանոս մարդիկն էլ Նորանից օգնութիւն ստացան։ Իւր մօտ եկող և օգնութիւն խնդրողներից Նա պահանջեց, որ հաւատան Իրեն և բժշկուածներին արձակում էր խրատելով. «Նայիր, այլ ևս չը մեղանչես, որ աւելի վատ չը լինի քեզ»։

Բժշկելով հիւանդներին, Քրիստոս քարոզեց և սովորեցրեց ժողովրդին, թէ ինչպէս պիտի ապրեն, որ փրկութիւն գտնեն և մտնեն երկնքի արքայութիւնը։ Նա ասում էր. «Ապաշխարեցէք, երկնքի արքայութիւնը մօտեցել է, հաւատացէք աւետարանին (այսինքն *փրկութեան բարի հաւրհաւին*»։) Նա քարոզեց ամեն տեղ. լճի ափին, դաշտում, սարի վերայ, մասնաւոր տներում, ժողովարաններում և նոյն իսկ տաճարումը։ Քրիստոս իւր ասելիքը մարդկանց հասկացրեց, երբեմն ուղղակի ասելով և երբեմն *առակներով*։

Ժողովրդից շատերը հաւատացին Քրիստոսին՝ տեսնելով Նորա կատարած հրաշագործութիւնները։ «Մեր մէջ մեծ մարգարէ է երևացել, Աստուած այցելել է իւր ժողովրդին», ասում էին ամեն կողմից։ Նորանք զարմանում էին Նորա քարոզներից և ասում էին. «Ոչ մի մարդ չի քարոզել այնպէս, ինչպէս քարոզում է սա»։

Բայց Յիսուսի քարոզները և գործերը դուր չեկան իրենց գիտութիւնով հպարտացող *դպիրներին* և իրենց բարեպաշտութիւնով գովաբանւող *փարիսեցիներին* և Նորանք ատեցին Նորան։ Նորանք Յիսուսին մեղաւորների բարեկամ համարեցին և ասացին, որ Նա Աստուածանից չի ուղարկուած, որովհետև օրէնքի հակառակէ գնում և չի հետևում նախնեաց աւանդութիւններին. իսկ Նորա հրաշագործութիւնների մասին տարածեցին, թէ Նա սատանայի զօրութիւնովն է գործում։ Վերջապէս նախանձը, Յիսուսի թշնամիներին, հասցրեց այս վճռին—սպանել Նորան։

Ժողովուրդը ինչ բանով գրաւուեց դէպի Քրիստոս։ Ի՞նչպիսի մարդիկն էին ուրախութեամբ գալիս Քրիստոսի մօտ։ Դժբաղդներին Քրիստոս ինչ օգնութիւն ցոյց տուաւ։ Ի՞նչ էր պահան-

ջում նորանցից, որոնց օգնութիւն էր ցոյց տալիս։ Քրիստոս որտեղ էր տալիս իւր քարոզները։ Ի՞նչ ձևով էր Նա իւր քարոզները տալիս։ Ի՞նչ է նշանակում առակ։ Ժողովուրդը Քրիստոսի հրաշքների և քարոզների մասին ի՞նչ էր ասում։ Բոլոր Հրէաներն էլ յարգում էին Քրիստոսի գործերը և քարոզները։ Քրիստոսի դէմ ոչքեր վերկացան։ Ինչու համար դպիրները և փարիսեցիները նորան թշնամի դարձան։ Նորանք Քրիստոսի մասին ի՞նչ էին ասում։ Նորանք կարողացան իրենց զրպարտութիւններով ժողովրդին սառցնել Քրիստոսից։ Նորանք վճռեցին Քրիստոսին ի՞նչ անել։

§ 9. ՔՐԻՍՏՈՍԻ ՅԱՂԹԱԿԱՆ ՄՈՒՏՔՆ ԵՐՈՒՍԱՂԷՄ։

(Ծաղկազարդ)

Մարկ. գլ. ժա. 1—11. Մատթ. իա. 1—17. Ղուկ. ժթ. 29—46. Յովհ. ժբ. 12—19

Հատկից վեց օր առաջ, Քրիստոս կրկին եկաւ Բեթանիայ գիւղը և այդտեղից, Զիթենեաց սարով, ճանապարհուեց Երուսաղէմ գնալու։ Նորա յետևից ժողովրդից մեծ բազմութիւն գնաց։ Հասնելով Զիթենեաց սարին, Քրիստոս պատուիրեց իւր աշակերտներին, գնալ մերձակայ գիւղից մի աւանակ բերելու։ Աշակերտները բերին աւանակը, որի վերայ մարդկանցից, ոչ ոք չէր նստել։ Ծածկեցին նորան իրենց հագուստներով և Քրիստոսին նստացրին նորա վերայ։ Այնուհետև ամբողջ ժողովուրդը կարողացաւ տեսնել հրաշալի վարդապետին, որը յարութիւն տուաւ Ղազարոսին։ Շատերը մտածում էին. «Այս Քրիստոսը, Դաւթի ցեղից խոստացուած Փրկիչն է» և սկսեցին պատուել Նորան։ Մի քանիսները արմաւենու ճիւղեր կտրեցին և ձգեցին ճանապարհի վերայ, շատերը իրենց հագուստը փռեցին աւանակի ոտների տակ և այս փառաբանական

երգը երգեցին. «Ովսաննա (*Փրկութիւն*) Որդւոյ Դաւթի. օրհնեալ եկեալ յանուն Տեառն, ովսաննա 'ի բարձունս»։ Քաղաք մտնելու ժամանակ ժողովրդից նոր բազմութիւն դուրս եկաւ Քրիստոսի առաջ։ «Այս ո՞վ է». հարցնում էին Նորան չըտեսնողները։ «Սա Յիսուսն է, Նազարէթից եկած մարգարէն», պատասխանում էին Նորանց։ Մինչև ոյն ժամանակ պատմում Ղազարոսի յարութիւն տալը։ Փարիսեցիները այդ ժամանակ ուզում էին բռնել Քրիստոսին, բայց վախենում էին ժողովրդից։ Քրիստոս մտաւ տաճարը, այնտեղից դուրս արաւ առևտրականներին, բժշկեց կոյրերին և կաղերին և երեկոյեան դէմ վերադարձաւ Բեթանիայ։

Դատարանում Քրիստոսին սպանելու վճիռն կայացնելուց յետոյ, Նա Երուսաղէմ եկաւ։ Այդ երբ էր։ Միայն Քրիստոս եկաւ այնտեղ։ Շրջապատած ամբոխը Նորան ինչպէս էր նայում։ Նորանք ինչով արտայայտեցին Նորան իրենց հաւատը։ Փարիսեցիները ինչ էին մտածում Նորան անելու։ Նորանք ինչու համար չըբռնեցին Նորան։ Քրիստոս տաճարում եղած ժամանակ ինչ արաւ։

§ 10. ՅՈՒԴԱՅԻ ՄԱՏՆՈՒԹԻՒՆԸ։

Մատթ. իզ. 3—5, 14—16, իէ 3—5, Մարկ. ժդ. 1—2, 10—11, Ղուկ. իբ. 1—6։

Քրիստոսի թշնամիները չըկարողացան Նորան բռնել ոչ երկուշաբթի և ոչ երեքշաբթի օրը, որովհետև Նա միշտ շրջապատուած էր լինում ժողովրդի բազմութիւնով և արդէն վճռել էին տօներից յետոյ բռնել Նորան, երբ ժողովուրդը Երուսաղէմից հեռացած կըլինի, բայց Քրիստոսի աշակերտներից մէկը, *Յուդա Իսկարիովտացին*, այդ բանում օգնեց Նորանց։ Նա չորեքշաբ-

թի օրն եկաւ Նորանց մօտ և խոստացաւ իւր Վարդապետին երեսուն արծաթով (մեր փողով 25 ր. 80 կոպ.) մատնել։ Արծաթասիրութիւնը և աշխարհային ագահութիւնը, դժբախտ Յուդային հասցրեց այդպիսի ամօթալի գործին։

Երբ որ Քրիստոսին մահի դատապարտեցին, խիղճը սկսեց տանջել Յուդային, մատնութեան համար։ Նա գնաց քահանայապետի մօտ և ասաց Նորան. «Մեղանչեցի ես, անմեղի արիւն մատնելով». ձգեց Նորանցից ստացած արծաթը, դուրս եկաւ և յուսահատութիւնից գնաց ինքն իրեն խեղդեց։

Դատարանի անդամներն երբ վճռեցին Քրիստոսին բռնել և բանտարկել։ Նորանց ով օգնեց Յիսուսին մինչև զատկի տօները սկսուելը, բռնելու։ Ի՞նչ դումարով Յուդան խոստացաւ Քրիստոսին մատնելու։ Ի՞նչ բան հարկադրեց Յուդային մատնութեան դիմելու։ Յուդան իւր ստացած արծաթներն յետոյ ի՞նչ արաւ։ Նա իւր կեանքն ինչո՞վ վերջացրեց։

§ 11. ՔՐԻՍՏՈՍԻ ԽԱՉԻ ՎՐԱՅ ՉԱՐՉԱՐՈՒԻԼԸ ԵՒ ՄԱՀԸ։

Մատթ. էի 31—56, Ղուկ. իդ 26—49, Յովհան. ԺԹ 16—30:

Զինուորները, մահուան դատապարտուած Յիսուսին, տարան կառափելու, այսինքն գլխատման, տեղը, որ Եբրայեցերէն կոչւում էր Գողգոթա։ Այնտեղ Նորան խաչեցին և Նորա աջ և ձախ կողմերին էլ—երկու աւազակների։ Քրիստոսի գլխավերևից մի տախտակ կպցրին, որի վերայ գրուած էր. «Յիսուս Նազովրեցի Թագաւոր Հրէից»։ Քրիստոսին խաչեցին՝ օրուայ երրորդ ժամին (այժմեան հաշւով առաւօտեան ինն ժամին)։ Քրիստոս խաչի վերայ ողորմածութեամբ աղօթում էր իւր չարչարողների համար և ասում. «Հայր, ներիր սորանց, որովհետև չը գիտեն, ինչ են անում»։

Քրիստոսի թշնամիները խաչի վերայ էլ հանգիստ չէին թողնում Նորան, ծաղրում էին և ասում. «Եթէ Աստուծոյ Որդի ես Դու, փրկիր քեզ և խաչից իջիր և մենք Քեզ կըհաւատանք»։ Քրիստոսի թշնամիներին հետևում էին և զինուորները։ Մինչև անգամ խաչուած աւազակներից մէկը, ծաղրելով ասաց Քրիստոսին. «Եթէ դու՝ Քրիստոսն ես, փրկիր քեզ և մեզ»։ Բայց միւս աւազակը պատասխանեց առաջինին. «Մի՞թէ դու Աստուծուց չես վախենում, երբ դու ևս նոյն պատժի մէջն ես, բայց մենք իրաւացի կերպով ենք պատժուած, իսկ սա ոչ մի վատ բան չի արած»։ Այս ասելով՝ աղօթքով դարձաւ դէպի Քրիստոս և ասաց. «Տէ՛ր, յիշիր ինձ, երբոր գաս Քո թագաւորութիւնովդ»։ Ճշմարիտն եմ ասում քեզ, այսօր իսկ ինձ հետ արքայութեան մէջ կըլինիս, պատասխանեց Նորան Քրիստոս։

Վեցերորդ (մեր հաշւով տասն երկու երորդ) ժամին երկրիս խաւար պատեց, այնպէս որ միայն աստղերն էին երևում։ Ծաղրածուիթիւնները դադարեցան և շատերը վախեցած՝ հեռացան խաչելութեան տեղից։ Քրիստոսի խաչի մօտ մնացին Տիրամայրը, Յովհաննէսը և մի քանի Գալիլեացի կանայք։ Քրիստոս տեսաւ իւր մօրը և Յովհաննէսին Նորան ցոյց տալով՝ ասաց. «Ահա քո Որդին», յետոյ նա նայեց իւր ամենասիրելի աշակերտին և ասաց Նորան. «Ահա քո մայրը»։

Մօտ իններորդ (մեր հաշւով երրորդ, կէսօրից յետոյ) ժամին, Քրիստոս աղաղակեց. «Աստուած իմ, Աստուած իմ, ընդէ՞ր թողէր զիս»։ Անցաւ մի քանի րոպէ, Քրիստոս ասաց. «ծարաւ եմ»։ Զինուորներից մէկը սպունգը թաթախեց քացախի մէջ և եղէգի ծայրն անցկացնելով՝ մօտեցրեց Տառապեալի բերանին։ Քրիս-

տոս ճաշակեց քացախը և ասաց. «Ամենայն ինչ կատարեալ է»։ Դորանից յետոյ Նա գլուխը խոնարհեցնելով՝ ասաց. «Հայր, քո ձեռքն եմ աւանդում իմ Հոգին» և արձակեց հոգին։

Այսպէս ահա Փրկիչը իւր անձը զոհելով մարդկանց մեղքի համար, մեզ հաշտեցրեց Աստուծոյ հետ։ Այն ժամանակ արեգակը խաւարեցաւ, վարագոյրը, որ սրբութիւն սրբոցը բաժանում էր տաճարի միւս մասից, պատառուեցաւ երկու մասի։ Գետինն այնպէս շարժուեցաւ, որ քարերը ճեղքուեցան և շատ մեռելներ յարութիւն առնելով՝ դուրս եկան գերեզմաններից։ *Հարիւրապետը*, որ խաչի մօտ կանգնած էր, ասաց. «Արդարև այս մարդը արդար էր և Աստուծոյ Որդի»։ Ժողովուրդը զարհուրած, կուրծքը ծեծելով՝ հեռացաւ խաչերի մօտից։

Քրիստոսին ոչ-ոք խաչեցին։ Նա միայնակ խաչուեց։ Ի՞նչ վերնագրով տախտակ կպցրին Նորա գլխավերևը։ Ո՞ր ժամին Նա խաչուեց։ Քրիստոս ինչ ասաց երբ Իրեն խաչում էին։ Քրիստոսի թշնամիները Նորան խաչի վերայ հանգիստ թողեցին։ Ինչո՞վ էին ծաղրում Նորան։ Նորա հետ խաչուած աւազակներն ինչ էին ասում։ Երկրաշարժ էլ ծաղրում էին։ Քրիստոս իրեն հաւատացող աւազակին ինչ ասաց։

Քրիստոսի խաչի վերայ ժամանակ ինչ փոփոխութիւններ տեղի ունեցան։ Քրիստոսի մօտ կային իւր բարեկամներից։ Քրիստոս իւր մայրը ո՞ւմ խնամքին յանձնեց։ Քրիստոսի վերջին խօսքերն ո՞րն էին։ Նա ո՞ր ժամին աւանդեց իւր հոգին։

Քրիստոսի մահից յետոյ ինչ փոփոխութիւններ տեղի ունեցան։ Խաչեալների պահապան հռովմայեցի զինուորներն ինչ էին մտածում Յիսուսի մասին։ Խաչերի մօտ կանգնած ժողովուրդն ինչ արաւ։

§ 12. ՔՐԻՍՏՈՍԻ ԹԱՂՈՒՄԸ ԵՒ ՆՈՐԱ ԴԺՈԽՔ ԳՆԱԼԸ։

Յովհան. ԺԹ. 31—42 Մատթ. ԻԷ 57—66,
Ղուկասու ԻԳ. 50—56։

Քրիստոսի մեռնելու երեկոյեան, սկսուեցաւ բաղաջակերաց տօնը, այդ պատճառաւ դատարանի անդամները չուզեցան, որ խաչուածները մնան խաչի վերայ և Պիղատոսից թոյլտուութիւն խնդրեցին, նորանց սրունքները ջարդելու (ոտի ծնկից սկսած մինչև գարշապարը), որպէս-զի խաչուածները շուտով մեռնեն։ Պիղատոսի թոյլտուութիւնով զինուորները գնացին Գողգոթա և աւազակների սրունքները ջարդեցին։ Երբոր մօտեցան Քրիստոսին, տեսան, որ նա արդէն մեռած է և նորա սրունքները չըջարդեցին, այլ զինուորներից մէկը գեղարդով Նորա կողը խոցեց և վէրքից իսկոյն արիւն և ջուր դուրս եկաւ։

Այս բանից յետոյ, շուտով Պիղատոսի մօտ եկաւ դատարանի անդամ Յովսէփ Արիմաթացին և խնդրեց, թոյլ տալ Յիսուսին խաչից իջեցնել և թաղել։ Պիղատոսը թոյլ տուաւ։ Այն ժամանակ Յովսէփը վերցրեց մաքուր կտաւներ, իսկ Նիկոդիմոսը, Քրիստոսի ծածուկ աշակերտը, տարաւ զմուռը հալուէի հետ խառնած։ Նորանք խաչից վերցրին Քրիստոսի մարմինը, օծեցին անուշահոտ իւղով, փաթաթեցին կտաւով և թաղեցին Գողգոթայից ոչ այնքան հեռու, Յովսէփի պարտիզում, նոր գերեզմանի մէջ, որ շինել էր տուել իրեն թաղելու համար. իսկ գերեզմանի դուռը ծածկեցին մի մեծ քարով։ Թաղմանը ներկայ էին մի քանի Գալիլեացի կանայք։ Նորանք մինչև թաղման

վերջը չըմնացին, այլ գնացին քաղաք, որպէս-զի մինչև տօնները սկսուելը, անուշահոտ իւղեր գնեն, Քրիստոսի մարմինն օծելու համար, երբ այդ կարելի լինէր։

Շաբաթ առաւօտեան Քրիստոսին թշնամի քահանայապետները ժողովուեցին Պիղատոսի մօտ և խընդրեցին. «Հրամայիր Նորա (Յիսուսի) գերեզմանը պահպանել, մինչև երեք օր, որպէս-զի Նորա աշակերտները գիշերը չըգան և գողանան Նորա մարմինը և ժողովրդին ասեն թէ Նա մեռելներից յարութիւն առաւ, ինչպէս ինքն էր ասում իւր կենդանութեան ժամանակ»։ Պիղատոսը նորանց իրաւունք տուաւ և նորանք պահապաններ կարգեցին Քրիստոսի գերեզմանի վերայ, իսկ քարը կնքով կնքեցին։

Թաղուելուց յետոյ, Աստուծոյ Որդի Յիսուսը իւր մարդկային հոգւով գնաց դժոխքը, կործանեց սատանայի իշխանութիւնը և այնտեղից հանեց այն մարդկանց հոգիները, որոնք հաւատով սպասում էին Իւր գալստեանը։

Խաչուածների մարմինները խաչերի վերայ մնացին մինչև լոյս շաբաթուայ երեկոյ։ Ո՞վ թոյլատրեց նորանց խաչից վերցնելու։ Այն ժամանակ ինչ արին, որպէս-զի խաչուածների մահը փութացնեն։ Ինչու համար Քրիստոսի սրունքները չըջարդեցին։ Զինուորներն ինչպէս համոզուեցան, որ Քրիստոս մեռած է։

Քրիստոսի մարմինը խաչից ո՞վ վերցրեց։ Յովսէփը և Նիկոդիմոսը ո՞ւմ թոյլտուութիւնով արին այդ։ Քրիստոսին ո՞ւրտեղ թաղեցին։ Բացի Յովսէփից և Նիկոդիմոսից թաղմանը ովքե՞ր էին ներկայ։ Կանայք մինչև թաղման վերջը մնացին։ Նորանք ինչ մտածեցին անելու։ Քրիստոսի թաղումից յետոյ Նորա թշնամիներին ինչն էր անհանգստացնում։ Նորանք Քրիստոսի մարմինը չըգողանալու համար ինչ արին։ Քրիստոսի մարդկային հոգու հետ ինչ պատահեց, երբ Նորա մարմինը դեռ գերեզմանումն էր։ Քրիստոս դժոխք մտնելով ինչ արաւ։

§ 13. ՔՐԻՍՏՈՍԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ։

Մատթ. ԻԸ 1—15 Մարկ. ԺԶ. 1—8 Ղուկասու Իդ. 1—11.

Շաբաթ օրուայ գիշերը, լոյս կիւրակի, Քրիստոսի գերեզմանի մօտ կանգնած զինուորները երկրաշարժ զգացին և տեսան, որ սպիտակ, փայլուն շորերով մի հրեշտակ եկաւ գերեզմանի քարը գլորեց և նստեց նորա վերայ։ Այդ տեսարանից նորանք սարսափած վազեցին քաղաքը, քահանայապետների մօտ և պատմեցին բոլոր պատահածը։ Քահանայապետները կաշառեցին նորանց և սովորեցրին ժողովրդի մէջ տարածել, թէ կիշերը, իրենց, քնած ժամանակ, նորա աշակերտները եկել են և գողացել Քրիստոսի մարմինը։

Այդ միջոցում Գալիլեացի կանայք, *Մարիամ Մագդաղենացին, Յակոբոսի մայր Մարիամը եւ Սաղոմէն* և նորանց հետ միւսները, գնացին Քրիստոսի գերեզմանը, նորա մարմինն օծելու։ Նորանք այն անցքի մասին ոչինչ չըգիտէին, նոյնպէս չըգիտէին, որ գերեզմանի վերայ պահապաններ են կարգուած։ Մտան այդին և տեսան, որ քարը գերեզմանից գլորուած է։ Մարիամ Մագդաղենացին սարսափած վազեց քաղաքը և պատմեց Քրիստոսի աշակերտներին. «Տիրոջը գերեզմանից հանել են և չըգիտենք, որտեղ են դրել Նորան»։ Միւս կանայքը մօտեցան գերեզմանին և այնտեղ տեսան հրեշտակին, որ աւետեց նորանց և ասաց. «Քրիստոս մեռելներից յարութիւն առաւ»։ Վերադառնալով Երուսաղէմ, նորանք ճանապարհին պատահած անցքի մասին, ոչ ոքի ոչինչ չ՚ասացին, միայն աշակերտներին պատմեցին այն, ինչ որ տեսել էին, բայց աշակերտները չըհաւատացին նորանց, մինչև որ իրենք չըտեսան յարութիւն առած Քրիստոսին։

Զինուորները շաբաթ օրին յաջորդող գիշերն ինչ տեսան Քրիստոսի գերեզմանի մօտ։ Նորանք գերեզմանից քարը գլորող հրեշտակին տեսնելով ինչ արին։ Այդ պատահած անցքը նորանք ո՞ւմ պատմեցին։ Այն ժամանակ քահանայապետներն ինչ արին։ Քրիստոսին հաւատացողներից առաջինն ո՞վ իմացաւ Քրիստոսի յարութեան մասին։ Կանայք ինչո՞ւ համար եկան Նորա գերեզմանը։ Նորանք պարտիզում ինչ տեսան։ Մարիամ Մագդաղենացին ինչ մտածեց, երբ գերեզմանի քարը գլորուած տեսաւ։ Նա այդ մասին ո՞ւմ ասաց։ Միւս իւղաբեր կանայքն ինչ արին։ Քրիստոսի աշակերտները հաւատացին նորանց։ Նորանք ե՞րբ հաւատացին Քրիստոսի յարութեանը։

§ 14. ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԸ։

Մարկ. ժզ. 19-20 Ղուկ. Իդ 49-53, գործք առաք. գլ. Ա. 3-12.

Պենդեկոստէի տօն օրերում Քրիստոսի աշակերտները եկան Երուսաղէմ և Քրիստոսի յարութեան քառասուներորդ օրը ժողովուեցան մի տուն։ Այստեղ Քրիստոս երևեցաւ նորանց և ասաց. «Ես պիտի ուղարկեմ այն, ինչ որ իմ Հայրս խոստացել է ձեզ։ Դուք մնացէք Երուսաղէմում, մինչև որ վերևից զօրութիւն կըստանաք։ Դուք այդ զօրութիւնը կըստանաք, երբ սուրբ Հոգին կիջնի ձեզ վերայ և այնուհետև ամբողջ աշխարհիս երեսին ինձ համար վկայ կըլինիք»։

Դորանից յետոյ Քրիստոս նորանց հետ գնաց Բեթանիայ գիւղը և ապա Զիթենեաց սարի վերայ օրհնեց նորանց և նորանց աչքերի առաջ համբարձաւ երկինքը և Հօր Աստուծոյ աջ կողմը նստեց (այսինքն *իւր մարդկութիւնովն Աստուածային փառք եւ պատիւ ստացաւ*)։

Աշակերտները կանգնած դէպի վերև էին նայում, մինչև որ հրեշտակները տեսան, որոնք ասացին նորանց. «Ի՞նչ էք կանգնել և դէպի երկինք նայում։ Այն Յիսուսը, որ համբարձաւ, դարձեալ պիտի գայ այնպէս, ինչպէս տեսաք նորան երկինք համբառնալիս»։ Աշակերտները մեծ ուրախութիւնով լցուած վերադարձան Երուսաղէմ։

(Համբարձման տօնը կատարում ենք Զատկից 40 օր յետոյ։)

Յարութիւն առած Քրիստոս վերջին անգամ երբ երևեցաւ իւր աշակերտներին։ Այդ ժամանակ Նա նորանց ինչ ասաց։ Նա նորանց հետ Երուսաղէմից ո՞րտեղ գնաց։ Նա Զիթենեաց սարի վերայ ինչ կատարեց։ Աշակերտներն ինչ արին, երբ Քրիստոս երկինք համբարձաւ։ Այդ ժամանակ նորանք ո՞ւմ տեսան։ Հրեշտակները նորանց ինչ ասացին։ Համբարձման տօնը երբ ենք կատարում։

Վ Ե Ր Ջ

ՑԱՆԿ

§ § Երես

Երկու խօսք 5
Նախագիտելիք 7

ԱՌԱՋԻՆ ԲԱԺԻՆ

1. Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. ամէն. 13
2. Տէրունական աղօթք 15
3. Աղօթք դասից առաջ 19
4. Աղօթք դասից յետոյ 21
5. Աղօթք ճաշից առաջ 22
6. Աղօթք ճաշից յետոյ 22
7. Երգ 'ի դէմս Որդւոյն Աստուծոյ . . . 24
8. Աղօթք առ սուրբ կոյսն 24
9. Աղօթք թագաւորի համար 25
10. Աղօթք առաւօտեան 25
11. Աղօթք երեկոյեան 27
12. Ծննդեան շարական 29

ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ

1. Ս. Կոյս Մարիամի ծնունդը և տաճարին ընծայուիլը 31
2. Ս. Կոյս Մարիամին աւետիս տալը և նորա արդար Եղիսաբէթին այցելելը . . . 32
3. Քրիստոսի ծնունդը և Բեթղեհէմի հովիւների Նորան երկրպագելը 34
4. Քրիստոսի քառասնօրեայ գալուստն 'ի տաճար կամ Տեառնընդառաջ 36

5. Մոգերի երկրպագութիւնը։ Յովսէփի և Մարիամի Եգիպտոս փախչիլը և այնտեղից վերադառնալը 38
6. Սուրբ Յովհաննէս Մկրտիչ 40
7. Քրիստոսի մկրտութիւնը 42
8. Քրիստոսի հրաշագործութիւնները . . 43
9. Քրիստոսի յաղթական մուտքն Երուսաղէմ (Ծաղկազարդ) 45
10. Յուդայի մատնութիւնը 46
11. Քրիստոսի խաչի վրայ չարչարուիլը և մահը 47
12. Քրիստոսի թաղումը և նորա դժոխք գնալը 50
13. Քրիստոսի յարութիւնը 52
14. Քրիստոսի համբարձումը 53

Սկզբունք քրիստոնէական ուղղափառ հաւատոյ Հայաստանեայց առաքելական սուրբ եկեղեցւոյ

Առաջին տարի	20 կոպ.
Երկրորդ տարի	25 կոպ.
Երրորդ տարի	30 կոպ.

ԳԻՆՆ Է 20 ԿՈՊ.

Մամուլի տակ է Դ. և Ե. տարուայ գլուխները։

Գլխավաճառներին 20 % զիջումն։

Ցանկացողները կարող են դիմել՝
Шушу. Въ книжную торговлю Б. ТЕРЪ-СААКЯНЦЪ.